AZG NEW PDF.qxd 05/07/2010 22:08 Page 1

Ազգ Azg

6 ՅՈՒԼԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 124 (4504)

ISSN: 1829-1651

# Առաջիկա հինգ օրերին եւս կլինի 38 աստիճան

Ինչպես տեղեկացանք Հիդրոմետ ծառայությունից, առաջիկա հինգ օրերին հանրապետությունում կպահպանվի մինչեւ 38 աստիճան տաքություն: Հուլիսի 5-ին հանրապետությունում գրանցվել է 39 աստիճան, իսկ մինչեւ հուլիսի 8-ը՝ ջերմաստիճանը տարբեր վայրերում կնվազի 1-2 աստիճանով, երեկոյան ժամերին հնարավոր է անձրեւ եւ քամի: Արարատյան դաշտում առաջիկա օրերին ջերմաստիճանը կտատանվի 36-37 աստիճանի միջեւ: Հուլիսի 8-10 օդի ջերմաստիճանը դարձյալ կբարձրանա մի քանի աստիճանով, էական տեղումներ չեն սպասվում: Հնարավոր է երեկոյան ժամերին քամու ուժգնացում: Այնպես որ, անհրաժեշտ է դիմանալ եւս 5 օր:

Ս. Ս.

# Ամերիկյան քաղաքականության «հավասարության» նշաններն այստեղ, որտեղ հարմար է

## Հայաստանի նախագահի՝ Թուրքիային ուղղված քայլով սքանչացած Քլինթոնը խոսում է հելսինկյան սկզբունքներից

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը այցելեց Ծիծեռնակաբերդ: Թեեւ խոսակցություններ այդ մասին կային, սակայն հստակորեն որեւէ մեկը դժվարանում էր ասել, թե հաստատապես ԱՄՆ պետքարտուղարը կայցելի Ծիծեռնակաբերդ: Սակայն երբ Բաքվում Քլինթոնը հայտնվեց Շեհիդների ծառուղի կոչվող վայրում, կարելի է վստահանալ, որ ըստ հարմարության կիրառվող «հավասարության» գաղափարով՝ Ծիծեռնակաբերդ այցելությունը չէր ուշանա, թեկուզ մասնավոր այցի տեսքով:

Ամեն դեպքում, վերջապես Հիլարի Քլինթոնը ավարտեց իր տարածաշրջանային այցելությունը: Հուլիսի 4-ին՝ ԱՄՆ-ի անկախության օրը, Բաքվում մեկնարկած հանդիպումների շարքը նույն օրը Հիլարին շարունակեց Երեւանում, իսկ երեկ արդեն Արեւելյան Եվրոպայի Հարավային Կովկասի երկրներ այցելությունները ավարտեց Թբիլիսիում:



Կիրակի ԱՄՆ պետքարտուղարին եւ նրանց ուղեկցող պատվիրակությանն ընդունեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: ԱՄՆ անկախության տոնի առթիվ շնորհավորանքներից ու երկկողմ հարաբերությունների ընդհանրական գնահատականից հետո Սարգսյանը երկու հանգամանք է շեշտել, որոնց առնչությամբ մեծ է անձամբ Քլինթոնի ներդրումը:

Տես էջ 3

# Քլինթոնը Թբիլիսիում

ԱՄՆ պետքարտուղարի տարածաշրջանային այցելության վերջին կանգառը Վրաստանն էր, որտեղ Հիլարի Քլինթոնը մեկնեց երեկ Երեւանից: Միխեիլ Սաակաշվիլու հետ հանդիպումից հետո Քլինթոնը նշել է, որ ինքը Թբիլիսի է եկել ԱՄՆ նախագահի հստակ ուղերձով. «Ես ժամանել եմ Վրաստան՝ նախագահ Օբամայի ուղերձով, որ մենք պաշտպանում ենք Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Մենք չենք ընդունում ազդեցության ոլորտները: ԱՄՆ-ը շարունակում է կոչ անել Ռուսաստանին՝ կատարել 2008-ի օգոստոսի 12-ի համաձայնագրի կետերը, որ ստորագրեցին նախագահներ Մեդվեդեւն ու Սաակաշվիլին. այն է՝ ռուսական զորքերի դուրսբերում Աբխազիայից եւ Հարավային Օսիայից եւ դրանք մինչպատերազմյան դիրքերի բերել», նշել է Հիլարի Քլինթոնը:

Ի դեպ, ըստ վրացական ԶԼՄ-ների, ԱՄՆ պետքարտուղարը Վրաստանից անձնական հավաքածուի համար կտանի գինի:

Հ. Ա.

ԵՐԵԿ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԷՐ

# Ինչու չի գործում սահմանադրությունը

**Սահմանադրությունը պետության զարգացման ու հզորացման հիմնական փաստաթուղթն է, հետեւաբար Հայաստանում այդ օրվա նշումը աշխատանքի չգնալով մի տեսակ չի համապատասխանում եւ հակասության մեջ է մտնում հզորացման գաղափարի հետ: Ինչեւէ, սա չէ կարեւորը, այլ այն, որ երեկ մեր բնակչության ճնշող մեծամասնությունը չգիտեր, թե հատկապես ինչ առիթով են իրենց «պարգեւել» այս ստացիկ շոգերին տանը մնալու երջանկությամբ: Իհարկե կգտնվեն մարդիկ, ովքեր վերամբարձ ոճով կհայտարարեն, որ Հայաստանում դեռ ձեւավորված չէ սահմանադրական մշակույթ, եւ դրա համար էլ մարդիկ տեղյակ չեն, թե ինչ ենք նշում: Սակայն եթե հիշենք 1995-ի հուլիսի 5-ը, երբ Հայաստանի քաղաքացիները հանրաքվեի միջոցով սահմանադրություն էին հաստատում, ապա Երեւանի փողոցները նույնպես դատարկ էին, եւ ոչ թե այն պատճառով, որ բոլորը գնացել էին ընտրատեղամասեր, այլ որովհետեւ ոչ մեկին էլ չէր հետաքրքրում, թե այդ պահին գործող իշխանությունները Սահմանադրություն անվան տակ ինչ են մոգոնել իրենց իշխանությունը հավերժացնելու համար: Ի դեպ, ընտրատեղամասերը դատարկ էին նաեւ 2005-ի նոյեմբերին, երբ սահմանադրական փոփոխություններ էին կատարվում, եւ բնակչությունն իր քվեով պետք է հաստատեր՝ համաձա՞յն է այդ փոփոխություններին, թե՞ ոչ: Այսինքն՝ եթե բուն սահմանադրության ընդունման հանրաքվեին էին մարդիկ անտարբեր, որովհետեւ չէին հավատում դրա «զորությանը», ապա ինչու այսօր պետք է հիշեն, որ հայ ժողովրդի կյանքում «պատմական» իրադարձություն է տեղի ունեցել եւ «ազգովին» նշում ենք սահմանադրության օրը:**

**1995-ի հուլիսի 5-ին զանգվածային կեղծիքների միջոցով անցկացված հանրաքվեով ընդունված սահմանադրությունը չի կարող լավը լինել, անկախ նրանից՝ ինչ է այնտեղ գրված, քանի որ սահմանադրության ուժը նրա տեքստի մեջ չէ, այլ բնակչության հավատի, որ այդ փաստաթուղթը կպաշտպանի իրենց, իսկ այսօր Հայաստանի շարքային քաղաքացին հավատո՞ւմ է, որ սահմանադրությունը պաշտպանում է իր իրավունքները:**

**Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը 15 տարեկան է, սա համեմատաբար երիտասարդ տարիք է, սակայն թեթեւակի հայացքն իսկ այդ փաստաթղթին ցույց է տալիս, որ արմատական փոփոխության կարիք ունի, իսկ տարբեր չինովնիկների պնդումները, թե մենք չենք կարողանում օգտվել մեր սահմանադրական իրավունքից, կոռեկտ չեն, որովհետեւ առաջին հերթին իշխանությունները պետք է ջանադրաբար պաշտպանեն եւ կատարեն այդ սահմանադրությունից բխող պահանջները, հետո միայն ուրիշներին սովորեցնեն ու պնդեն, թե «քաղաքացիների մեջ զարգացած չէ սահմանադրական մշակույթը»: Իսկ գործող սահմանադրությունը սահմանում է միայն նախագահի բացարձակ իշխանությունը, ինչի արդյունքում էլ ներքաղաքական զարգացումները եւ քաղաքացիական հասարակության ձեւավորումը կախված են միմիայն մի քաղաքական ինստիտուտի՝ նախագահի որոշումներից ու ցանկությունից: Միաբեւեռ քաղաքական համակարգը չի կարող երկարատեւ կյանք ունենալ, այն արդեն հանգեցրել է մեր կյանքում այնպիսի իրավիճակի, որը ԽՍՀՄ-ում կոչվում էր լճացում: Այսինքն՝ սահմանադրությունը արդեն այսօր իսկ կարիք ունի լուրջ ու արմատական փոփոխության: Սակայն դրան պետք է գնալ, եթե այդ քայլը իսկապես արժանանա ժողովրդի մեծամասնության համընդհանուր աջակցությանը:**

**Ինչեւէ, մեր սահմանադրությունը վերակենդանացման լուրջ աշխատանքի կարիք ունի, եւ քանի դեռ դա չի կատարվել, անիմաստ է հույս ունենալ, որ այն երբեւէ կգործի ի նպաստ ՀՀ քաղաքացիների:**

ԱՐՍԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱ կուսակցության փոխնախագահ

# Մադրիդյան սկզբունքների վերջին տարբերակ. նոր ձեւակերպո՞ւմ, թե՞ նոր բովանդակություն

## Եկան ու գնացին՝ մինչեւ հուլիսի 16-ը

**Համանախագահները կրկին եղան տարածաշրջանում, բայց դե, լավագույն դեպքում, համաձայնեցում կարելի է ակնկալել միայն հուլիսի 16-ին Ղազախստանում տեղի ունենալիք ԵԱՀԿ ԱԳ նախարարների ոչ պաշտոնական գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հերթական հանդիպման վերաբերյալ:**

**«Ազգն» արդեն տեղեկացրել է, որ համանախագահներ Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ) եւ Իգոր Պոպովը (Ռուսաստան) տարածաշրջանային այցելությունը հուլիսի 2-ին սկսեցին Ստեփանակերտից՝ մոտ երկուժամանոց հանդիպում ունենալով ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ, ապա նաեւ հանդիպելով պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարների հետ: Արցախում համանախագահները լսել են ղարաբաղյան կողմի տեսակետները հակամարտության կարգավորման մասին: Մինսկի խմբի ներկայացմամբ, տարածաշրջան այցելելու նպատակներից մեկն է Ալմաթիում կայանալիք ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների ներկայացուցիչների հանդիպմանը նախապատրաստվելը:**

**Ստեփանակերտում տեղի ունեցած հանդիպումներին ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեի բացակայությունը գործընկերները բացատրել են Ֆասիեի զբաղվածությամբ, նշելով, որ նա համանախագահներին կմիանա արդեն Երեւանում:**

**Արդեն հուլիսի 3-ին համանախագահները ողջ կազմով հանդիպում ունեցան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Պաշտոնական տեղեկություններով, Հայաստանի նախագահը համանախագահների հետ քննարկել է ԼՂ հակամարտության կարգավորման ներկա փուլին վերաբերող հարցեր, այդ թվում՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների սանկտպետերբուրգյան բանակցություններում ներկայացված մադրիդյան սկզբունքների վերջին տարբերակը:**

**Մինսկի խումբը նույն օրը հանդիպել է նաեւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Հայաստանի արտգործնախարարության տեղեկացմամբ, համանախագահները արտգործնախարար Նալբանդյանին ներկայացրել են նախորդին Ստեփանակերտում Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ ունեցած իրենց հանդիպումները:**

Տես էջ 8

# «Հակառակ Բաքվի վարչակարգին մոտ կանգնած աղբյուրների հավաստիացումներին՝ Քլինթոնի ասածները հուսադրող չէին»

## ԱՄՆ պետքարտուղարի Ադրբեջան եւ Հայաստան այցելություններին արձագանքում է թուրքական մամուլը

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Երեկ ավարտվեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի այցելությունը Հայաստան: Այցի կարեւորության մասին խոսելն ավելորդ է: Պարզապես ասենք, որ դա ուշադրության կենտրոնում պետք է լինի Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, ինչպես նաեւ Իրանի եւ տարածաշրջանի երկրների: Համենայն դեպս, Թուրքիան ուշի ուշով հետեւում էր Քլինթոնի Հայաստան եւ Ադրբեջան կատարած այցին, նախապես ենթադրելով, որ նա Երեւանում, բացի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցից, կքննարկի նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացի կասեցումը:

Ըստ երեւույթին, Անկարային մտահոգում էր նաեւ Երեւանում ԱՄՆ պետքարտուղարի հնարավոր այցելությունը Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր եւ «ցեղասպանություն» բառը արտասանելու հավանականությունը: Հիլարի Քլինթոնը, բախվելու գնով թուրք-ամերիկյան լարվածության ներկա փուլում Անկարայի հակազդեցությանը, ծաղկեպսակ դրեց հուշահամալիրում: Ինչ վերաբերում է «ցեղասպանություն» բառի արտասանմանը, ապա այդ մասին հստակ պատկերացում է տալիս Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության հաղորդագրությունը. «Պետքարտուղարը մասնավոր այցով եղավ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ մատուցելու իր հարգանքի տուրքը 1,5 մլն հայերին, որ իրենց կյանքը կորցրեցին 1915 թվականին»:

Այս հաղորդագրությամբ ակնհայտորեն աղավաղվում է ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլեւ Ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիրի անունը: Դրանով հանդերձ չպետք է մոռանալ, որ ԱՄՆ-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պետբյուջեից ֆինանսական օգնություն հատկացնող միակ պետությունն է աշխարհում, եւ նրա նախագահը, սկսած 1975-ից, ապրիլի 24-ին պաշտոնական ուղերձով զորակցում է հայ ժողովրդին:

Ինչպես հայտնի է, պետքարտուղար Քլինթոնը Երեւան էր ժամանել Բաքվից: Ադրբեջանի նախագահի եւ արտգործնախարարի հետ նրա հանդիպումները կարեւոր են նաեւ նրա երեւանյան բանակցությունները գնահատելու առումով: Քլինթոն-Ալիեւ հանդիպումը դռնփակ էր: Այնուամենայնիվ, Բաքվի վարչակարգին մոտ կանգնած աղբյուրներից «Հյուրիեթի» ստացած տեղեկության համաձայն, հանդիպմանը ղարաբաղյան հակամարտության հետ քննարկվել է նաեւ «հայկական օկուպացիայի տակ գտնվող ադրբեջանական տարածքների» հարցը:

Տես էջ 3

AZG NEW PDF.qxd 05/07/2010 22:19 Page 1



# Ամենից շատ խախտվում է սահմանադրության 3-րդ հոդվածը

Թեպետ հուլիսի 5-ը տոնական օր է՝ Հանրապետությունում նշում են ՀՀ սահմանադրության օրը, սակայն սահմանադրագետ **Ֆելիքս Թոխյանը** «Հայացք» ակումբում առաջնահերթ ուշադրության հրավիրեց ոլորտի խնդրների ու բացթողումների վրա հայտարարելով՝ ՀՀ սահմանադրությունը լիարժեք չի կիրառվում: Հատկապես սոցիալական իրավունքն այսօր կյանքի չի կոչվում: Մասնագետի խոսքով՝ դատարանները պետք է սովորություն դարձնեն դատական ակտերը կայացնելիս հիմք ընդունել սահմանադրությունը, մինչդեռ այն դատարանների համար ուղեցույց չէ: Հայաստանում ամենից շատ խախտվում է սահմանադրության 3-րդ հոդվածը, որով սահմանվում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են»: «Սա դիտավորություն չէ, պարզապես չեն պատժում մարդու իրավունքները խախտողներին: Շատերն էլ իրենց իրավունքների պաշտպանության առումով իներտ դիրք են բռնում»:

Սահմանադրագետ Հրայր Թովմասյանն էլ հավելում է, որ խախտվում են նաեւ հավաքների մասին, ընտրությունների անցկացման հետ կապված հոդվածները: ՀՀ սահմանադրությունը խախտվում է, որովհետեւ չկա քաղաքական ընկալման մշակույթ: Սահմանադրության հոդվածների չկիրառման գլխավոր պատճառներից են մեխանիզմների պակասը եւ կենտրոնացված իշխանություն ունենալը:

Հրայր Թովմասյանի մեկնաբանությամբ՝ 1995 թ. ընդունված սահմանադրությամբ արտացոլվում էր գերկենտրոնացած քաղաքական իշխանություն ունենալու անհրաժեշտությունը: Նրա ներկայացմամբ 1995 թ. սահմանադրությունը անձակենտրոն էր: Իշխանությունը գերկենտրոնացած էր մեկ անձի ձեռքում՝ հանրապետության նախագահի, ով կարող էր զուտ քաղաքական դրդապատճառներով արձակել ԱԺ-ն, ինչը նշանակում է, որ ԱԺ-ն պետք է իր օրենսդիր լիազորությունները դներ մի կողմ եւ տեղավորվեր ՀՀ նախագահի քաղաքական ծրագրերը սպասարկողի դերակատարության մեջ: Նախագահն էր միանձնյա նշանակում վարչապետին, ինքն էր վարում կառավարության նիստերը, միայն իր հանձնարարությամբ վարչապետը կարող էր նիստ հրավիրել: ՀՀ նախագահը նաեւ Արդարադատության խորհրդի նախագահն էր: «Այս երեքի պարագայում մեր սահմանադրությունը կարող էր արդյունավետ աշխատել՝ միայն ելնելով մեր նախագահների՝ հրեշտակ լինելու կանխավարկածից», ասաց նա Արմենպրեսի մամուլի սրահում:

Բայց քանի որ հրեշտակները միայն հեքիաթներում են հանդիպում, ապա 1995թ. ընդունած սահմանադրությունը չի կարելի անվանել ժողովրդավար: 2005թ. Սահմանադրական փոփոխություններից հետո այդ խնդիրները իրավաբանորեն կարգավորվեցին, բայց իրականում քիչ բան փոխվեց: «Կառավարման կիսանախագահական համակարգը, երբ նախագահը մեծամասնություն ունի խորհրդարանում, շատ է նմանվում նախագահականին: Ինստիտուցիոնալ առումով փոփոխություն կա, բայց հաշվի առնելով, որ 2005թ. առ այսօր բոլոր նախագահները մեծամասնություն են կազմել խորհրդարանում՝ այդ մեխանիզմը ամբողջությամբ չի աշխատել եւ դրսեւորվել»: Հրայր Թովմասյանի խոսքերով՝ այս ընթացքում եղել են նաեւ ձեռքբերումներ, որոնցից ամենակարեւորը Սահմանադրական դատարանի դերի բարձրացումն էր:

Թե որքանո՞վ են իրավաչափ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունները՝ ԼՂՀ կարգավիճակի հարցի կարգավորման դեպքում հնարավոր է ազատագրված տարածքների վերադարձ, Հրայր Թովմասյանն ասաց, որ նախագահի հայտարարություններով ԼՂՀ սահմանադրությունը չի խախտվում: «ԼՂՀ սահմանադրությունում գրված է, որ մինչեւ ԼՂ խնդրի վերջնական լուծում ԼՂ իշխանությունը տարածվում է նաեւ այդ տարածքների վրա: Այնպես որ այդ խնդրի լուծման պարագայում ԼՂՀ սահմանադրությունը չի խախտվում»:

«Արդյո՞ք ՀՀ նախագահը նման հայտարարություններ անելու լիազորություն ունի» հարցին էլ Հրայր Թովմասյանը նշեց, որ իրավական առումով այս հարցին դժվար է պատասխանել. «Բայց եթե մենք այդ բանակցային գործընթացի մաս ենք՝ չենք կարող դրանք չկատարել: Հիմա չեմ ուզում անդրադառնալ զուտ միջազգային իրավունքին, թե ինչ է նշանակում փաստացի ռեժիմ, չճանաչված պետություն, ինչ է նշանակում ճանաչված պետության կողմից նրանց շահերի ներկայացում: Սրանք դուրս են սահմանադրական իրավունքի շրջանակներից եւ միջազգային իրավունքի շրջանակներում են գտնվում»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կրկին նոտարական կոռուպցիայի մասին

*Ինչը հերքում են արդարադատության նախարարությունում*

Այն, որ Հայաստանում նոտարները հավելյալ վճարներ են գանձում գործարքները վավերացնելիս, անձամբ ենք համոզվել եւ այս մասին գրել ենք մեր թերթում («Ո՞րն է ամենաշահութաբեր «բիզնեսը» Հայաստանում», «**Ազգ**», 25.02.2010 թ.): Մեր հրապարակումից հետո այս խնդրին անդրադարձավ նաեւ կառավարության տեղեկատվական-վերլուծական կենտրոնի «Հրապարակում» հաղորդաշարը, որտեղ մեր կողմից վերահաստատեցինք վերոնշյալ հոդվածում ասվածը: Նույն հաղորդման ժամանակ այլ անձինք եւս փաստեցին, որ նոտարները ավելի մեծ գումարներ են պահանջել իրենցից, քան պետտուրքի եւ ծառայության դիմաց սահմանված գումարներ են: Վերջերս միջազգային կառույցների ներկայացուցչությամբ իրականացված ուսումնասիրության հեղինակները նույնպես արձանագրեցին նոտարների կողմից քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից հավելյալ գումարներ պահանջելու երեւույթի առկայությունը:

Չնայած այս ամենին, արդարադատության նախարարության մի պաշտոնյա՝ տիկին **Մարիամ Գաբոյանը**, մի քանի օր առաջ բառացիորեն հայտարարեց, որ նոտարական համակարգում կոռուպցիա չկա: Նախարարության այս կարծիքն իհարկե նորություն չէր: Նույն բանը, տարբեր ձեւակերպումներով, մշտապես պնդում է արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանը**, վերոնշյալ տիկինը ընդամենը կրկնում է իր նախարարի ասածը: Եվ ինչպե՞ս են նրանք հիմնավորում իրենց կարծիքը: Իբր մինչ այժմ ոչ մի բողոք նոտարներից հավելյալ գումար պահանջելու մասին չի արձանագրվել, եւ եթե այդպիսի բողոք լինի, ապա, նախարարի խոսքով, այդ նոտարն անպայման կպատժվի: Այս «հիմնավորումը» շատ նման է խորհրդային տարիների լավագույն ավանդույթներին, երբ խոսվում էր մեծ հաջողությունների եւ որոշ թերացումների մասին, որոնք անպայման կուղղվեն եւ թերացողները կպատժվեն: Բնական է, որ դա երբեք էլ տեղի չէր ունենում:

Պրն Գեւորգ Դանիելյանին կարող ենք առաջարկել, իր իմացած մեթոդներով կամ ձեւերով ստուգել որեւէ նոտարական գրասենյակի որեւէ նոտարի, եւ այն ժամանակ նախարարը ոչ թե մարդ չի գտնի պատժելու, այլ չի իմանա, թե որ նոտարին չպատժի: Նախորդ հոդվածում նշել էինք եւ հիմա էլ ենք ընդգծում. նոտարական երեք գրասենյակներում, մի քանի նոտարներ նույն՝ պետտուրքի եւ ծառայության վճարի չափերը 2-3 անգամ գերազանցող գումարը մեզանից պահանջեցին: Գուցե նախարարը հարցնի, թե ինչո՞ւ նրանց անունները չենք նշել: Այն բանի համար, որ առաջին՝ անուններ են նշում, երբ ընդհանուր համակարգը գործում է օրենքի շրջանակներում եւ լինում են առանձին օրենքը խախտողներ: Եվ երկրորդ, ինչպե՞ս կարող ենք ապացուցել այդ փաստը կոնկրետ անուն նշելու դեպքում: Տեսախցիկո՞վ պետք է մտնենք նոտարների մոտ, եւ նրանք էլ տեսախցիկի առջեւ կկրկնեն իրենց պահանջած գումա՞րը, որպեսզի դա ներկայացնենք նախարարի՞ն:

Նոտարական համակարգում իբր կոռուպցիայի բացակայության մասին խոսելու եւ օրենք խախտողների անուններ տալու պահանջի փոխարեն, լավ կլիներ, որ պրն Գեւորգ Դանիելյանը նախ անձամբ համոզվեր մեր գրածների եւ հասարակության մեջ տարածված տեսակետների իրավացիության մեջ, ընդուներ նոտարների կողմից հավելյալ գումարներ շորթելու փաստը, ապա կոնկրետ մի քանի առարկայական բարեփոխումներ իրականացներ այս ոլորտում: Մասնավորապես, հարկ է կարգավորել ընդամենը երկու-երեք խնդիր: Առաջին, սահմանվեին պետական տուրքի եւ ծառայության վճարների կոնկրետ չափեր: Ոչ թե, ասենք՝ 500-5000 դրամ, այլ կոնկրետ 500 դրամ կամ 5000 դրամ, կամ մեկ այլ գումար: Երկրորդ՝ այդ գումարը վճարվեր ոչ թե ըստ նոտարի առաջարկի՝ «կարող եք այստեղ վճարել, կարող եք՝ բանկում», որտեղ ի սկզբանե պարզ է, թե որ տարբերակն է գործելու, այլ միայն բանկում՝ նոտարին ներկայացնելով վճարման անդորրագիրը եւ խստորեն արգելելով առձեռն վճարումը տեղում: Եվ երրորդ, այդ ամենը դարձնել հասանելի բոլորին՝ առցանց տարբերակով, նոտարական գրասենյակներում հայտարարությունները պատերին փակցնելով, ԶԼՄ-ներում հայտարարություններ տալով եւ այլն:

Կարծում ենք՝ անընդհատ արդարանալու եւ արդարացնելու փոխարեն, ավելի ճիշտ կլիներ այս միջոցառումները իրագործել, եւ այն ժամանակ, արդեն երբ լինեն օրենք խախտող նոտարներ, պատժել նրանց: Այլապես, իրականությունը հերքելով, այն չի դադարի գոյություն ունենալուց:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՍՏԱՆԱ

# Նախագահը մասնակցել է ԵՎՐԱԶԵՍԻ խորհրդի նիստին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում մասնակցել է Եվրասիական տնտեսական ընկերակցության (ԵՎՐԱԶԵՍ) միջպետական խորհրդի նիստին: Հայաստանն այդ կազմակերպությունում 2003 թվականից ունի դիտորդի կարգավիճակ: Այս մասին հաղորդում են նախագահի մամուլի գրասենյակից:

Միջպետական խորհրդի նիստի աշխատանքներին մասնակցել են նաեւ Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի նախագահները: Պետության ղեկավարները բանակցություններ են վարել նեղ, ապա՝ ընդլայնված կազմով, որից հետո ստորագրել են նիստի ամփոփիչ փաստաթղթերը:

Նիստում, մասնավորապես, անդրադարձ է եղել ԵՎՐԱԶԵՍ-ի շրջանակում մաքսային միության ձեւավորմանը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետեւանքների հաղթահարման ուղղությամբ ԵՎՐԱԶԵՍ-ի անդամ երկրների համատեղ միջոցառումների իրականացման ծրագրին եւ կազմակերպության գործունեության հետ կապված այլ հարցերի:

Աստանայում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել նաեւ Ղրղզստանի անցումային շրջանի նախագահ Ռոզա Օթունբաեւայի հետ: Հանրապետության ղեկավարը շնորհավորել է տիկին Օթունբաեւային՝ պաշտոնն ստանձնելու կապակցությամբ, մաղթել հաջողություններ: Ղրղզստանի նորանշանակ նախագահը ներկայացրել է իր երկրում ստեղծված քաղաքական եւ տնտեսական իրավիճակը, ինչպես նաեւ երկրի ժողովրդավարացման ուղղությամբ ժամանակավոր կառավարության կողմից ձեռնարկվելիք քայլերը:



Ղազախստան կատարած աշխատանքային այցի շրջանակում, նախագահ Սերժ Սարգսյանն Աստանայում երեկ երեկոյան մասնակցել է նաեւ Մայրաքաղաքի օրվան նվիրված պաշտոնական ընդունելությանը:

Հանրապետության նախագահի գլխավորած պատվիրակությունը այսօր կվերադառնա Երեւան:

Հ. Ա.

# «Իսրայելը ներողություն չի խնդրի Թուրքիայից»

*Ոչ էլ փոխհատուցում կվճարի*

Խոսքը մայիսի 31-ին թուրքական «Մավի Մարմարա» նավի վրա իսրայելական հատուկ ջոկատի հարձակման մասին է, որի հետեւանքով սպանվել էին Գազա մարդասիրական օգնություն տանող 9 թուրք «հումանիստներ»: Հունիսի 16-ին Թուրքիան պահանջել էր, որ մեկ ամսվա ընթացքում Իսրայելը ներողություն խնդրի Անկարայից եւ փոխհատուցում վճարի հարձակումից տուժածներին: Իսրայելը թուրքական պահանջներին պատասխանել էր հունիսի 21-ին պարգեւատրելով «հերոսի» շքանշանով այն զինվորներին, որոնք սպանել էին թուրքերին:

Չնայած իսրայելական այս ակնհայտ մարտահրավերին, Թուրքիան համառեց պահանջներում՝ ստանալու համար, ըստ երեւույթին, նոր պատասխան: Վարչապետ **Բենիամին Նաթանյահուն** հեռուստազրույցի ընթացքում միանշանակ կրկնել է, որ Իսրայելը ներողություն չի խնդրելու Թուրքիայից, ավելացնելով. «Մի՞թե Իսրայելը կարող է ներողություն խնդրել այն դեպքում, երբ ինչ-որ մի խառնամբոխ փորձում էր տանջամահ անել իր զինվորներին»:

Իսրայելի վարչապետը միաժամանակ ընդգծել է, որ չի կարող խնդրո առարկա լինել նաեւ հարձակումից տուժողներին փոխհատուցում վճարելը:

Անշուշտ, Թել-Ավիվի մերժումը սպառնում է առավել սրել նրա հարաբերությունները Անկարայի հետ: Արտգործնախարար Դավութօղլուն այս մասին առավել քան կտրուկ էր՝ կա՛մ ներողություն, կա՛մ հարաբերությունների խզում:

Հ. Չ.

# ՌԴ-Բելառուս-Ղազախստան մաքսային միություն

Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի նախագահներ Դմիտրի Մեդվեդեւը, Ալեքսանդր Լուկաշենկոն եւ Նուրսուլթան Նազարբաեւը ստորագրել են հայտարարություն երեք երկրների մաքսային միության ուժի մեջ մտնելու վերաբերյալ: Այդ մասին հուլիսի 5-ին Աստանայում (Ղազախստան) հայտարարել է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը:

Այսպիսով, մաքսային միության ստեղծման ճանապարհին եղած խոչընդոտները հաղթահարվել են, նշում է ՌԻԱ գործակալությունը: Ալեքսանդր Լուկաշենկոն հուլիսի 3-ին ասել էր, որ Բելառուսը ստորագրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 05/07/2010 21:36 Page 1



# Անցուդարձ

## Հիմնական օրենքից դուրս մեր կյանքը

Մյուսների համար տոն, լրագրողներիս համար աշխատանքային Սահմանադրության օրը ամեն տարի սկսվում եւ ավարտվում է նույն շրջագծով՝ ոչինչ ավելի կամ պակաս, եթե չհաշվենք միայն, որ այս տարի ընդհանուր խորապատկերին ավելացել է պետքարտուղար տիկնոջ այցելության փաստը՝ իր հեռագնա հետեւանքներով. նայած հետեւանքներին՝ 2010-ի հուլիսի 5-ի Սահմանադրության օրը միշտ մեջբերվելու է: Իսկ ընդհանրապես՝ Սահմանադրության օրվա առավոտյան արթնանում ես ու նախորդող օրերի առավոտներից տարբեր որեւէ զգացողություն առանձնապես քեզ չի պատում, ասենք, ոչ մի առաջնահերթ զգացողություն, որ 15 տարի է սահմանադրություն ունես... կամ որ սահմանադրություն ունես թիկունքիդ, ու ոչ մի անլվա չի կարող հասնել ու թիկունքիդ կամ գոտկատեղից ներքեւ անպատիժ հասցնել, չի շնչի քո բաժին օդն ու իր վրայով չի ձեւի քո բաժին օրենքը... Մանավանդ՝ «սահմանադրություն» բառն ու «15» թիվը ոչինչ չեն հիշեցնում հատկապես ներկա սերնդին, մարդիկ հազիվ թե մտաբերեն 15 տարի առաջ սահմանադրության ցավոտ ծնունդը, 1995 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված սահմանադրությանը նախորդած դրամատիկ նախասահմանադրական զարգացումները: Չեն հիշում, որ 1995 թվականի նոյեմբերի 27-ը, որ ազգը պետք է երկյուղածորեն համարեր իրենը, երկար դեռ համարվում էր կեղծված սահմանադրության օր, սահմանադրության այլ տարբերակներ կային սեղանին, եւ պայքար կար՝ առավել ժողովրդավարական մեխանիզմներ ամրագրող սահմանադրությունն ընդունելու համար: Սակայն ունենք այն, ինչ ունենք, դեռ 2005-ին էլ իբր հանրաքվե արեցինք ու բարեփոխեցինք 10-ամյա սահմանադրությունը. դե հասկանում ենք, առանց սահմանադրության որեւէ պետություն պետություն չէ, իսկ մեր սահմանադրությունն էլ միշտ էլ կարող ենք բարելավել՝ ցանկություն լինի, մանավանդ՝ ցանկություն լինի գոնե եղած սահմանադրությամբ ապրելու եւ ոչ թե որպես անհրաժեշտ աքսեսուար այն դնելու մեր գրասեղաններին, իսկ կյանքը գնա լրիվ ուրիշ՝ սահմանադրությանը հակառակ ուղղությամբ: Մի խոսքով՝ Սահմանադրության օրվա առավոտին հաջորդում է կեսօրը, մի երկու մամուլի ակումբ անպայման որոշած են լինում լուսավորել ազգիս սահմանադրական գիտելիքներով , մի զույգ պահանջարկված սահմանադրագետ ունենք՝ Վարդան Պողոսյան եւ Հրայր Թովմասյան, կանչում-խոսեցնում են անպայման մեր այսքան ու այսքան տարեկան սահմանադրությունից ամեն տարի, ստանդարտ ընթացք է դառել սա արդեն: Առաջինը կասի, որ մեր կյանքն ու սահմանադրությունը, է՜, սար-ձոր հեռու են, ու եթե մեր իշխանությունների իրավագիտակցությունը չփոխվի, սահմանադրությունը մի սիրուն թուղթ կմնա՝ դրված սեղանին, կյանքում չիրագործվող: Հրայր Թովմասյանն էլ կասի՝ Սահմանադրությունն ամբողջությամբ չի աշխատել, բայց կարեւորը փոփոխությունների պոտենցիալն ամրագրված է սահմանադրության մեջ:

Բայց նրանցից առաջ արդեն երկրիդ նախագահը ելել ու ուղերձ է հղել երկրի սահմանադրակարոտ ժողովրդին, թե 15 տարեկան սահմանադրությունդ շնորհավոր, բայց եւ, արդար լինենք, այդ նույն ուղերձում ընդունել է, որ «անցած մեկուկես տասնամյակի ընթացքում Սահմանադրությամբ ամրագրված բոլոր նպատակներն ու իդեալները չեն, ցավոք, որ կարողացել ենք կյանքի կոչել, հատկապես լիարժեք սոցիալական եւ իրավական պետություն դառնալու ճանապարհին մեզ լուրջ անելիքներ են սպասում: Բայց ակնհայտ է ամենակարեւորը՝ ՀՀ հիմնական օրենքը գործում է: Եվ գործում է արդյունավետորեն»: Չնայած մարդու իրավունքների առաջին պաշտպան **Լարիսա Ալավերդյանն**, օրինակ, հենց երեկ հակառակն էր պնդում, որ երկրում սահմանադրական կարգը չի գործում, էլի չնայած՝ չէր հուսահատվում. ներուժ կա, որ սահմանադրական նորմերն աշխատեն: Նախագահի «Սահմանադրությունը հասարակության համերաշխության մեր բանաձեւն է» արտահայտության հետ ոչ ոք չի կարող վիճել, տեսականորեն շատ գրագետ ձեւակերպված միտք է, բայց գործնականում մեր հասարակությունն ու այդ բանաձեւը՝ շուն ու կատու քեզ օրինակ, պատճառներն էլ բոլորին հայտնի են՝ մեկ-մեկ ու հազար անգամ թվարկված, ինս-տի-տու-ցիո-նալ: Լավ, նախագահին հանգիստ թողնենք, մանավանդ որ նա այս պահին մեզանից հեռու-հեռու Աստանայում է:

Ու դառնանք յուրաքանչյուրիս բաժին Սահմանադրության օրվան, որը թեեւ շատ նման է 15 տարի շարունակ հուլիս 5-ին բացվող ու փակվող օրվան, սակայն այդ օրը Նոյի ժամանակից ու դրանից էլ առաջ դիք կանգնած Արարատի ֆոնին հայտնված ամերիկացի բարձրաստիճան տիկինը մի փոքր շեղեց 15 տարվա դրվածքն ու օրը տարավ ուրիշ ուղղությամբ: Դե գիտեք, որ միշտ չի պատահում, որ բարձրաստիճան ամերիկացի, էն էլ կապույտ հագած տիկին, մեր Սահմանադրության օրը գնա Ծիծեռնակաբերդ, գլուխ խոնարհի, դեռ նախորդ օրն էլ, իր երկրի Անկախության տոնին ասի՝ իր համար մեծ պատիվ ու հաճույք է այդ օրը գտնվել Հայաստանում (դե գիտեք՝ դիվանագիտությունը մեկ անգամ յուղելու, տասն անգամ դեղելու արվեստ է...): Դե իսկ ԱՄՆ-ը, տիկնոջ փոխանցմամբ, շահագրգռված է ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում, մեզ էլ բոթում է, թե հարցի լուծումը նաեւ Հայաստանի շահերից է բխում՝ տարածաշրջանի զարգացման ու նոր հնարավորությունների ստեղծման տեսանկյունից (գլխի չէինք ընկնի՝ եղած հնարավորությունները հորով-մորով արեցինք՝ նորերն էլ մեզ նվեր, տակն ի՞նչ կա, ի՞նչ է ուզածները...): Դե, մենք խոսքից ուրախացող ազգ ենք, թող ասի («Ի սկզբանե բանն էր...»), թե մեծ ակնկալիքով է սպասում հետագա հանդիպումներին, հետո էլ մեր արտգործնախարարի հետ ոտքով զբոսնելով նախագահի նստավայրից Հյուսիսային պողոտայով, հրապարակով հասնի «Մարիոթ»՝ «սպուտնիկով» մանրակրկիտ ուսումնասիրած փողոցները սեփական աչքերով տեսնելով: Հենց մեր Սահմանադրության օրը, ուրեմն, դիվանագետ տիկինը խիստ դիվանագիտական քայլով մատ անելով հոռետեսներին՝ այցելել է Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրել եւ 1 րոպե լռել՝ ԵԽԽՎ նախագահի նախնիների արյուն զոհ գնացած անմեղ զոհերի հիշատակը հարգելով: Սահմանադրության օրվա նվերը ազգիս՝ ամերիկացի ժողովրդի անունից: Մնացյալը սովորական օրվա սովորական շարունակություն՝ սահմանադրագետներով, դրանց երեկոյան-եթերային կյանքով՝ Քլինթոնի, Սարգսյանի, Նալբանդյանի ժպտուն դեմքերին փոխընդմեջ: Մեր Սահմանադրության օրն ու դրան նախորդող երեկոյան հայ-ամերիկյան դիվանագիտական շփումների բուն տեքստի ու բուն նյութի հետագա ու դոզա առ դոզա բացահայտումներն էլ՝ հետհուլիսհինգյան օրերին: Դեղահաբերի ներգործության աստիճանը կամաց-կամաց բացելով եւ ցուցանելով: Մեկնաբանությունների եւ վերլուծությունների ամսաչափ (ավելի՛) նյութի մատակարումով:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## «Հակառակ Բաքվի վարչակարգին մոտ կանգնած ...»

1-ին էջից

Թուրքական թերթի վկայությամբ, հանդիպման ընթացքում «հնարավոր է համարվել օկուպացված 7 շրջաններից 5-ի վերադարձը Ադրբեջանին եւ հույս է հայտնվել, թե ԱՄՆ-ը, բացառությամբ Լաչինի ու Քելբաջարի, Հայաստանին կհամոզի ազատել այդ շրջանները», սակայն Ալիեւի հետ մամուլի ասուլիսում Քլինթոնի ասածները, ըստ «Հյուրիեթի», «հուսադրող չեն եղել»:

Ինչո՞ւ: Ասուլիսում Ալիեւն ասել է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Ադրբեջանի ամենակարեւոր խնդիրն է, սպառնում է տարածաշրջանի անվտանգությանը, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, Եվրոխորհրդարանն ու Եվրոմիությունն ունեն օկուպացված տարածքներից Հայաստանի դուրսբերման որոշումներ: Նա խնդրել է, որ ԱՄՆ-ն նպաստի հիմնահարցի միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում կարգավորմանը, ավելացնելով. «Ստեղծված իրավիճակի հետեւանքով, մեր ժողովուրդը տանջվում է»:

Ի պատասխան՝ պետքարտուղար Քլինթոնը նշել է. «ԱՄՆ-ը կողմ է հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Մենք դեմ ենք տարածաշրջանում ռազմական ուժի գործադրմանը: ԱՄՆ-ը չի կարող հիմնահարցը կարգավորել, նա ընդամենը կարող է օգնել կողմերին, որ համաձայնության գան»:

Պետքարտուղար Քլինթոնը Բաքվի օդանավակայանում ասուլիս է հրավիրել նաեւ արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ, որտեղ նորից անդրադարձել է Ալիեւի հետ հանդիպմանը եւ ասել. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ԱՄՆ-ը նախընտրում է խաղաղ ճանապարհը: Դեպի խաղաղություն տանող ուղին դժվարին է, դրանով հանդերձ անհրաժեշտ է եւ հնարավոր»:

Ի դեպ, «Զամանը», որը պետքարտուղարի այցը լուսաբանել է «Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանը ճնշում է գործադրում ԱՄՆ-ի վրա» վերնագրով, հիշեցնում է, որ ապրիլին Ադրբեջանը պատճառաբանելով, թե ԱՄՆ-ը աջակցում է իր շահերին վնասակար Հայաստան-Թուրքիա հաշտեցմանը, Վաշինգտոնին մեղադրել էր Ղարաբաղի հարցում հայամետ դիրքորոշում որդեգրելու մեջ եւ սպառնացել վերանայել ԱՄՆ-ի հետ հարաբերությունները:

Պետքարտուղար Հիլարի Քլինթոնի Հայաստան այցելությանն էլ անդրադարձել է CNN-Turk-ը, նշելով. «Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ասաց, որ իր երկրի կարեւորագույն խնդիրը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն է, ինչպես պետքարտուղարին Բաքվում Ալիեւն էր ասել: Մամուլի համատեղ ասուլիսում Քլինթոնն անդրադարձավ հունիսի երկրորդ կեսին Լեռնային Ղարաբաղի սահմանագծում չորս հայ եւ մեկ ադրբեջանցի զինծառայողի սպանության միջադեպին եւ դրա առնչությամբ քննադատեց Ադրբեջանին: Պետքարտուղարն ընդգծեց. «Այս կարգի գործողությունները ոտնահարում են 1994-ի զինադադարի պայմանագիրն, ուստի եւ անընդունելի են»: Նա կողմերից պահանջեց հողային խնդիրները լուծել խաղաղ եղանակով, իսկ Թուրքիային դիմեց Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ առաջընթաց քայլ կատարելու եւ հայկական սահմանը բացելու կոչով»:

# ԱԶԳ

## Ամերիկյան քաղաքականության «հավասարության» նշաններն այնտեղ, որտեղ հարմար է

1-ին էջից

Ըստ պաշտոնական տեղեկատվության, որպես առաջին հանգամանք Հայաստանի նախագահը նշել է ԱՄՆ-ի ներդրումը ԼՂ խնդրի կարգավորման գործում: «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի իր պատմական տարածքում ազատ տնօրինելու իր ճակատագիրը եւ զարգանալու: Այս իրավունքն անքակտելի է, եւ այս իրավունքի իրացման շնորհիվ է, որ այսօր աշխարհում շատ ժողովուրդներ իրենց երջանիկ են զգում», ասել է Սերժ Սարգսյանը:

Նախագահը շնորհակալություն է հայտնել նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործում ԱՄՆ-ի աջակցության համար: Նախագահի խոսքերով, «Չնայած թուրքերը պատրաստ չէին եւ այսօր էլ պատրաստ չեն առանց նախապայմանի Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու, մեզ համար չափազանց կարեւոր է զգալ Միացյալ Նահանգների վարչակազմի վերաբերմունքն այս խնդրի վերաբերյալ»:

«Շնորհակալություն Ձեր բարի խոսքերի համար՝ Հելսինկիի սկզբունքների հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում ԱՄՆ-ի վարչակազմի եւ նախագահ Օբամայի գործադրած ջանքերի համար: Ես անձամբ իմ անունից ցանկանում եմ Ձեզ շնորհակալություն հայտնել Թուրքիայի հետ Ձեր երկրի հարաբերությունները բարելավելու գործում Ձեր անձնական ներդրման համար», այսպես է արձագանքել **Հիլարի Քլինթոնը**:

Հայաստանի ԱԳ նախարարի եւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի համատեղ ասուլիսում **Էդվարդ Նալբանդյանը** նշեց ինչպես Սերժ Սարգսյանի՝ Վաշինգտոն այցելության, այնպես էլ հայ-ամերիկյան հարաբերություններում ամերիկահայ համայնքի դերակատարման կարեւորությունը: Նալբանդյանի խոսքով, ԱՄՆ-ը եւ Հայաստանը համամիտ են, որ բոլոր ջանքերը ներդրվեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության բացառապես խաղաղ կարգավորման հասնելու համար՝ հիմնվելով ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության, ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության սկզբունքների վրա:

Հակամարտության լուծման նույն սկզբունքներն իր խոսքում հիշատակեց նաեւ Հիլարի Քլինթոնը: «Ինչպես ես արդեն ասել եմ Բաքվում, ԱՄՆ-ը աջակցում է խաղաղ կարգավորմանը՝ հելսինկյան սկզբունքների հիման վրա՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության եւ ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքների հիման վրա», ընդգծեց Քլինթոնը, ավելացնելով, որ բնավ էլ հեշտ քայլ չէ կարգավորումը: «Գիտենք, որ դա հեշտ չի լինի, բայց մենք կարծում ենք, որ դա անհրաժեշտ հիմք է ապահով եւ բարգավաճ ապագայի համար»:

Պետքարտուղարն անդրադարձավ նաեւ հունիսի 18-19-ի միջադեպին, սակայն մինչ այս ինչած հայտարարությունների մեծ մասի նման՝ անհասցե, սակայն հասկանալի: Քլինթոնը դատապարտման խոսքեր ասաց ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման դեմ՝ չմանրամասնելով դատապարտման հասցեատիրոջը, թե բոլոր կողմերին է կոչ արվում «զերծ մնալ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումից»: Մինսկի խմբի գործընթացը որակելով ինտենսիվ՝ Քլինթոնը հույս հայտնեց, թե հնարավոր կլինի իրական առաջընթաց տեսնել հիմնարար սկզբունքների համաձայնեցման հարցում:

Այս առնչությամբ Էդվարդ Նալբանդյանը, հիշեցնելով Սանկտ Պետերբուրգում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումը, նշեց, որ եւս մի կարեւոր հանգրվան գրանցվեց բանակցությունների գործընթացում. «Կողմերը պայմանավորվեցին շարունակել բանակցությունները այն հիման վրա, ինչին հասել ենք մինչ այսօր, այսինքն՝ մինչ Սանկտպետերբուրգյան հանդիպումը, երբ կողմերին ներկայացվեց մադրիդյան առաջարկների նոր՝ վերջին տարբերակը»:



ՖՈՏՈԼՈ

Ինչ վերաբերում է հայ-թուրքական գործընթացին, ապա Քլինթոնն իր հիացմունքն արտահայտեց «Հայաստանի նախագահի խիզախ որոշման առնչությամբ՝ հետեւողական լինելու խաղաղության հարցում»: ԱՄՆ-ի պետքարտուղարը խոստացավ անել հնարավորը՝ հայ-թուրքական համատեքստում առաջընթացի համար: Նրա խոսքերով, ԱՄՆ-ը խրախուսում է Թուրքիային կատարել այն քայլերը, որոնք «Թուրքիան խոստացել էր կատարել»՝ երկու կողմերին կոչ անելով «բաց պահել դուռը հարաբերությունների նորմալացման ու հաստատման համար»: «Գնդակը մյուս կողմում է», ակնհայտորեն նկատի ունենալով Թուրքիային՝ ասաց Քլինթոնը:

Երեկ պետքարտուղարը հանդիպեց նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու մարդու իրավունքների, ժողովրդավարացման, մամուլի ազատության հարցեր: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումը տեղի է ունեցել «Գաֆեսճյան» հիմնադրամում, որին մասնակցել են ավելի քան 25 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ներկայացրել են իրենց հուզող հարցերն ու խնդիրները:

**Հ.Գ. Երեւանում Հայաստանի նախագահի կողմից հյուրասիրության առնչությամբ Քլինթոնը ասուլիսում նշեց, որ ուտելիքը կատարյալ էր: Այդ հարցում ԱՄՆ-ի պետքարտուղարին ոչ մի դիվանագիտություն էլ պետք չէ. ԱՄՆ-ի սննդի համեմատ Հայաստանում, իհարկե, ուտելիքը ավելի համեղ է:**

AZG NEW PDF.qxd 05/07/2010 21:36 Page 1



# Տարեգրություն պարտքի եւ պատվի մասին

***Իմ գրասեղանին է Գրիգոր Գրիգորյանի հենց նոր լույս տեսած «Երկար ճանապարհից հետո» գրքի երկրորդ մասը: Ուշադրությունս գրավեց այն, որ գիրքն ավարտվում է մի քանի գրախոսականներով՝ առաջին հատորի վերաբերյալ: Եվ կարդալով Գրիգորի հուշագրությունների շարունակությունը, մտածեցի, որ ինքս չեմ կարող գրախոսական գրել: Բանն այն է, որ խիստ սուբյեկտիվ վերաբերմունք ունեմ հեղինակի հանդեպ: Ավելին, մենք վաղեմի ծանոթներ ենք եւ վաղեմի բարեկամներ: Այդ իսկ պատճառով էլ ցանկացա պատմել հենց հեղինակի մասին, որն իմ համոզմամբ՝ պարզապես չէր կարող գրիչ չվերցնել այս գիրքը գրելու համար: Կասկած չկա, որ երբ արդեն հրատարակվել է գեներալ-չեկիստի հուշագրությունների երկրորդ՝ վերջին մասը, գրականության պրոֆեսիոնալ գործիչները չեն կարող չարձագանքել այդ գրքին: Իսկ ես անձամբ, երկրորդ հատորն ընթերցելուց հետո, անկասելի անհրաժեշտություն զգացի որոշ մտքեր հայտնելու մի մարդու, ընկերոջ եւ ժամանակակցի մասին, առանց որի նույնիսկ անհնար է պատկերացնել մեր դժվարին ժամանակները:***







Դա 1969 թվականի գարնանն էր: Ես Եգիպտոսից նամակ ստացա անձամբ Թուր Հեյերդալից, որն այդ ժամանակ կառուցում էր պապիրուսե «Ռա» նավակը եւ, ժամանակ չկորցնելով, հավաքագրում էր ինտերնացիոնալ անձնակազմ: Իր արշավախմբի համար նա որոշել էր բժիշկ գտնել Խորհրդային Միությունից: Եվ զուգադիպեց այնպես, որ հենց այդ օրերին Կահիրեի հայկական «Ջահակիր» թերթը տպագրեց ԱՊՆ գործակալության նյութը՝ «Վուլկան» եւ «Հեյզեր» ինքնաշեն նավակներով երկարատեւ նավարկություն անցած երեք կամչատկացի ճանապարհորդների մասին, որոնց թվում էի ես՝ որպես բժիշկ: Մամուլից տեղեկանալով Հեյերդալի ծրագրերի մասին՝ «Ջահակիրի» մեր հայրենակիցներն այցելել էին մեծ ծովագնացին եւ պատմել իմ մասին: Նրանց միջոցով էլ Հեյերդալը նամակ ուղարկեց ինձ, երբ գտնվում էի աշխարհի ծայրին: Ճիշտ է, ուղերձում նշվում էր եւ այն մասին, որ միաժամանակ դիմել է նաեւ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի նախագահ Մ.Վ. Կելդիշին: Նա գերազանց գիտեր, որ ԽՍՀՄ-ում նման հարցերը դժվար թե հնարավոր լիներ լուծել մասնավոր ճանապարհներով: Ես իսկույն պատասխանեցի Հեյերդալին՝ տալով համաձայնությունս, չհապաղելով հավելել, որ պատրաստ եմ նկարազարդել նրա ապագա գիրքը:

...Այս պատմության մասին բազմիցս եմ գրել՝ տարբեր առիթներով: Իհարկե, իմ ցանկությունը ոչ միայն միամիտ էր, այլեւ պատրանքային: Համենայն դեպս դեռ այն ժամանակ պարզվեց, որ բազմաթիվ պատճառների մի անհաղթահարելի պատնեշ է կանգնած իմ առջեւ: Ես պատահաբար չվերհիշեցի իմ կենսագրության այդ դրամատիկ դրվագը: Բանն այն է, որ երկար տարիներ անց ես պատահաբար իմացա, որ Մոսկվայի եւ Պետրոպավլովսկ-Կամչատսկի համապատասխան մարմինները առաջարկով դիմել էին իրենց երեւանցի գործընկերներին՝ տեղեկություններ հաղորդելու իմ մասին: Ամենածիծաղելին այն էր, որ մինչ այդ ես ոչ մի անգամ չէի եղել Հայաստանում, եւ դժվար թե որեւէ մեկը կարողանար տեղեկություններ տալ իմ մասին: Եվ սակայն պարզվեց, որ Նալբանդյան փողոցում որոշել էին օգնել ինձ եւ երաշխավորական նամակ ուղարկել Մոսկվա: Այդ փաստաթուղթը կազմել էր Հայաստանի ՊԱԿ-ի օպերատիվ աշխատակից Գրիգոր Գեւորգի Գրիգորյանը:

Տասնամյակներ անց Գրիգորը, որի հետ բարեկամացել էինք, խոստովանեց, որ այն ժամանակ ինքը Բաքվից եւ Ստեփանակերտից պահանջել էր բռնաճնշմանը վերաբերող նյութերը: Հայրս 1956 թվականին պաշտոնապես ռեաբիլիտացվել էր, իսկ մայրս, ստալինյան ճամբարներն անցնելուց հետո, նույնիսկ Բաքու էր հրավիրվել իր՝ դահիճ Բաղիրովի դատավարությանը որպես վկա մասնակցելու համար: Ինչ վերաբերում էր իմ անձին, ապա, ինչպես Գրիգորն ասաց, իրեն բավական էր ծանոթանալ իմ պատմվածքներին ու վիպակներին, որոնք այն ժամանակ տպագրվում էին ոչ միայն Մոսկվայում, այլեւ Երեւանում: Հանուն այն բանի, որ իր հայրենակիցը հայտնվեր «Ռա» պապիրուսե նավակի ինտերնացիոնալ անձնակազմում, նա իր հաղորդքի գործընկերներին ու ազգականներին խնդրել էր հանել արխիվային փաստաթղթերը հորս՝ Ղարաբաղի մարզկոմի ժողկրթության բաժնի նախկին վարիչի եւ Հադրութի շրջգործկոմի նախագահի վերաբերյալ:

Ամեն անգամ հիշելով այս պատմությունը, չեմ կարողանում թաքցնել զարմանքս: Իրոք, այդ մարդու ինչի՞ն էր պետք այդքան հանգամանալից ձեռք զարկել մի բավական բարդ գործի: Չէ՞ որ նա շատ լավ գիտեր, որ ո՛չ Կրեմլը, ո՛չ Լուբյանկան թույլ չէին տա, որ միջազգային ծովարշավի ինտերնացիոնալ անձնակազմում հաստատվեր իմ թեկնածությունը: Եվ մի անգամ ես այդ մասին հարցրեցի Գրիգորին: Նա քիչ խորամանկորեն ժպտաց, ապա վայրկենապես լրջանալով՝ պատասխանեց. «Դա իմ պարտքն էր»: Եվ ավելացրեց. «Բացի այդ էլ, այն ժամանակ մտածեցի՝ գրողը տանի, փորձը փորձանք չէ: Գուցե հանկարծ մի բան ստացվի»:

Ահա այդպես. պարտք ու հարգանք սեփական մասնագիտության հանդեպ: Երբեք թույլ չի տվել, որ որեւէ մեկը համարձակվի ծաղրել, առավել եւս՝ վիրավորել իր մասնագիտությունը, իր ծառայությունը: Ինչ վերաբերում է ստալինյան բռնաճնշումներին, ապա հիանալի գիտեր, որ ամենից շատ ոչնչացվել են չեկիստները: Եվ համոզված եմ, բոլորովին էլ պատահական չէր, որ տարիքային պաշտոնաթողությունից հետո գեներալ Գրիգորյանը մնաց մարտական շարքում: Երաշխիքն այն փաստն է, որ սկսեց գրել հենց այն գիրքը, որտեղ բացահայտվում է ժամանակի կերպարը...

Շաբաթական համարյա թե մեկ անգամ, իսկ երբեմն էլ ավելի հաճախ նա զանգում էր ինձ, ինչ-որ ամսաթվեր ու անուններ հարցնում: Ճշտում էր: Ես հասկանում էի, որ անհանգիստ այդ մարդը ձեռք է զարկել ոչ թե պարզապես հուշերի, այլ՝ պատմությանը: Բնականոն երեւույթ է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հեղինակի բուն կենսագրությունը հագեցած է հարուստ իրադարձություններով, որոնք հիրավի բախտորոշ էին մեր ժողովրդի համար: Բավական է ասել, որ վերակառուցման տարիներին սկիզբ առած Ղարաբաղյան շարժման գործնականում բոլոր ղեկավարները մշտական շփման մեջ էին Գրիգոր Գրիգորյանի հետ արդեն այն պատճառով, որ հենց այդ ժամանակ էր նրա ուսերին դրվել հասարակական կարգի պահպանման պարտականությունը՝ առաջին հերթին հանրապետության սահմանամերձ շրջաններում, որտեղ կատարվում էին ազերիների անվերջանալի սադրանքներ: Նրան կարելի էր տեսնել այն բոլոր շրջաններում, որտեղ իրադրությունը սրված էր: Եվ մեր երիտասարդ պետության ու ընդհատակի ղեկավարները չէին կարող հաշվի չնստել Գրիգորյանի պահելի մասնագիտական փորձի հետ, որը կանգնած էր հայոց բանակի ստեղծման ակունքներում:

Կասկած չկա, որ «Երկար ճանապարհից հետո» գրքի հեղինակը, իր անցած երկար ուղու մասին հիշողություններ գրելով, չէր կարող բավարարվել մեկ, եզակի փորձով: Ճակատագրի կամոք եւ կյանքի տրամաբանության թելադրանքով նա արդեն ամենաասուր իրադարձությունների խառնարանում էր հայտնվել մեր ժողովրդին պարտադրված պատերազմի ավարտից հետո: Հիշում եմ, ավարտելով իր հուշագրությունները, նա անկեղծորեն խոստովանեց, որ անհրաժեշտություն կա շարունակելու յուրատեսակ այդ մենախոսությունը իր եւ մեր ժամանակների մասին: Հարցն այն է, որ այսօր չգիտես ինչու հիշում ենք միայն բուն Արցախյան պատերազմը: Այնինչ մեր պատերազմն սկսվել է հենց Հայկական ԽՍՀ տարածքում: Մենք չենք կարող մոռանալ դաժան մարտական գործողությունները Երասխում եւ Նախիջեւանյան սահմանի ողջ երկայնքով, Մեղրու շրջանում եւ առանձնապես Նյուվադի գյուղում: Եվ ամենուր կարելի էր տեսնել Գրիգորին, որը կառավարական լիազորություններ ուներ նույնիսկ բանակցություններ վարելու հակառակորդի հետ: Նույնը կարելի է ասել Շամշադինի, Նոյեմբերյանի, Գորիսի, Կապանի եւ Իջեւանի շրջանների մասին:

Կարծում եմ, շատերն են հիշում, որ պրոֆեսիոնալ, եթե չասենք՝ տոհմական կագեբեական Գրիգոր Գրիգորյանը ութսունական թվականների կեսերին աշխատում էր որպես Հայաստանի ներքին գործերի փոխնախարար: Սակայն քչերը գիտեն, որ երկրի համար ամենածանր՝ 1992 թվականին գեներալ Գրիգորյանը նշանակվեց հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ եւ սահմանային զորքերի հրամանատար: Իսկ շատ չանցած արդեն ղեկավարում էր Հայաստանի պաշտպանության նախարարության ռազմական հակահետախուզության վարչությունը: Ես այս ամենն ասում եմ, որովհետեւ հեղինակն իրոք պահելի նյութ ուներ գրքի համար, որն անկասկած կարեւոր կռվան կդառնա ապագա պատմաբանների ձեռքին: Իսկ ես կուզենայի հիշեցնել ընթերցողին, որ օրերս Գրիգորյանն ավարտել է իր հուշագրությունների երկրորդ հատորը: Գիրքն առայժմ լույս է տեսել հայերեն, տաղանդավոր գրող եւ թարգմանիչ, Հայաստանի վաստակավոր ժուռնալիստ Ռայա Խասապետյանի խմբագրմամբ:

Ես հեռու եմ «Երկար ճանապարհից հետո» երկհատորյակի ժանրը սահմանելու փորձից: Նման դեպքերում միշտ հիշում եմ անմոռանալի Վալենտին Կատաեւի խոսքերը, թե ինքն ընդունում է միայն այն, ինչ հետաքրքրում է ընթերցողին: Սակայն տվյալ դեպքում ես այնուամենայնիվ համարձակություն կվերցնեի ասելու, որ գործ ունենք տարեգրության ժանրի հետ: Հինավուրց ժամանակներում ասում էին, թե տարեգրությունը, միեւնույն է, գրվում է, եթե նույնիսկ ժամանակակիցները փաստերը չեն հանձնում թղթին, մագաղաթին: Նման դեպքերում «տարեգրությունը գրվում է» շնորհիվ ժողովրդի պատմական հիշողության: Իմ կարծիքով, Գրիգոր Գրիգորյանը հասել է գլխավորին: Կենդանի, փաստագրական լեզվով թղթին է հանձնել իրադարձությունների այնպիսի էջեր, որոնցում արտացոլված են ողբերգական դեպքերը Մասիսում, Վարդենիսում, աղետի գոտում, Գետաշենում, Երասխ-Սադարակում, Ոսկեպարում, Զանգեզուրում, Արծվաշենում (Բաշքենդում) եւ շատ ու շատ աշխարհագրական կետերում: Հեղինակը մանրամասն նկարագրում է 1990 թվականի մայիսի 27-ի չարագործական, արյունալի սադրանքը Երեւանի երկաթգծի կայարանի մոտ: Հիշատակում է, թե ինչ էր կատարվում Երեւանում նախագահական ընտրություններից անմիջապես հետո 1996 թվականի սեպտեմբերի 26-ին: Մի ընդարձակ գլխում մանրամասներ է պատմում, թե ինչ է կատարվել Ազգային ժողովում 1999 թվականի հոկտեմբերի 27-ի երեկոյան եւ գիշերը:

Ծանոթանալով Գրիգոր Գրիգորյանի կյանքի էջերին՝ ես ուշադրություն դարձրեցի, որ իր զբաղեցրած պատասխանատու պաշտոնների բոլոր աստիճաններին նա շարունակեց մնալ մի տեսակ անփոփոխ: Մնաց՝ ինչպես կար: Մնաց որպես պատվի մարդ, որպես պարտքը կատարող մարդ: Եվ կարծում եմ, որ իր գրքով նա ազնվորեն կատարեց պարտքը անցյալի ու ապագայի հանդեպ:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**

ԱՆԾԱՆՈԹ ՀԱՅԵՐ

# Նիկոլաս Քրիստոֆի որդիական խորհրդածությունները

**Մ. Նահանգներում սովորաբար հունիսի 3-րդ կիրակի օրը նշվող «հայրերի օրվա» կապակցությամբ Օրեգոնից «Նյու Յորք թայմսի» թղթակից Նիկոլաս Քրիստոֆը թերթի օն-լայն տարբերակում շարադրել է իր որդիական խորհրդածությունները, որոնց մեջ մեզ համար տարօրինակն ու հետաքրքրականը այն է, որ հայրը՝ Վլադիսլավ Քրժիշտոֆովիցը, պարզվում է, հայ է եղել:**

**«Հայրս հայ էր եւ ծնվել էր մի երկրում, որն այժմ գոյություն չունի՝ Ավստրո-Հունգարիայում: Սերում էր ազնվականի ընտանիքից, որին պատկանել են հազարավոր ակրերի հասնող տարածքներ», գրում է նա եւ շարունակում պատմել հոր ոդիսականը:**

**Երկրորդ համաշխարհայինի օրերին բանտարկվել է նացիստների կողմից՝ Լեհաստանում իրենց զորքերի ներկայության վերաբերյալ լրտեսություն ծավալելու մեղադրանքով: Բանտապահներին կաշառելով ազատվել է եւ փախել Ռումինիա, որտեղ հասկանալով, որ ապագա չի**



Վլադիսլավ Քրժիշտոֆովից

**կարող ունենալ, անցել է Հարավսլավիա: Այնտեղ բռնվել է ու համակենտրոնացման ճամբար ուղարկվել, որտեղից երկու տարի անց հնարավոր է եղել փախչել նախ դեպի Իտալիա եւ ապա՝ Ֆրանսիա: Մինչ այդ նա կորցրել է իր բոլոր հարազատներին Օսվենցիմում, Սիբիրում եւ այլուր:**

**Հակառակ ֆրանսերենին եւ 6 այլ լեզուների տիրապետելուն (որոնց թվում չի եղել անգլերենը) նա Ֆրանսիայում իրեն օտար զգալով՝ 1952-ին տեղափոխվել է «հնարավորությունների երկիր՝ Մ. Նահանգներ» եւ սկսել սովորել 8-րդ լեզուն՝ անգլերենը: Քանի որ չափազանց դժվար է եղել ամերիկացիների համար ասել իր անունը, նա կրճատել է այն եւ դարձել Լադիս Քրիստոֆ: Որոշ ժամանակ Օրեգոնում աշխատելուց հետո նա համալսարանական ուսումը շարունակել է 34 տարեկանում եւ դոկտորականի աստիճան ստացել Չիկագոյի համալսարանից, որտեղ էլ իր ապագա կնոջը՝ Ջեյնին է հանդիպել: Դրանից հետո որպես քաղաքագիտության պրոֆեսոր երկար տարիներ դասավանդել է Պորտլենդի պետհամալսարանում:**

**«Շատ ուշադիր էր կարիքավորների հոգսերին: 80 տարեկանում նա կրակարանի համար նույնքան արագ փայտ էր կտրում, որքան ես: 90-ին շարունակում էր որսի դուրս գալ: Իսկ ամենից ավելի նա չափազանց լավատես էր: «Ճիշտ է, պատերազմն ու համակենտրոնացման ճամբարները, նաեւ հայրենիք ու տուն կորցնելը ատելի են դարձրել ինձ համար վեճն ու պայքարը մարդկանց միջեւ, բայց մյուս կողմից չեն նվազեցրել հավատը մարդկության ապագայի նկատմամբ... Եթե մարդիկ այսքան արվեստի գործեր են ստեղծել ու գիտությունը զարգացրել, ինչո՞ւ պիտի անկարող լինեն հաստատելու արդարություն, եղբայրություն եւ խաղաղություն աշխարհում», գրել էր նա իր հուշերում: Ես պահպանում եմ նրա այդ սկզբունքը եւ համարում, որ նրա ապրած հարուստ կյանքի համար ես հպարտ պետք է զգամ ինձ», եզրակացնում է հոդվածագիրը:** Հ. Ծ.

# Մոսկվայում հիշեցին Միկոյան գերդաստանի անդամներին



Անաստաս Միկոյան



Արտեմ Միկոյան

Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությամբ Մոսկվայի Ազգությունների տանը տեղի է ունեցել Միկոյան գերդաստանին նվիրված երեկո: Այս տարի լրանում է խորհրդային ականավոր պետական գործիչ Անաստաս Միկոյանի ծննդյան 115 տարին, նրա եղբոր՝ ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանի 105 տարին:

Այս տարվա մարտին Մոսկվայում, 80 տարեկան հասակում մահացավ Անաստաս Միկոյանի որդին՝ նշանավոր պատմաբան եւ հրապարակախոս Սերգո Միկոյանը: Սակայն նրա աճյունը Նովոդեւիչիեի գերեզմանատանը թաղվեց հունիսի 30-ին: ՌԴ ԳԱ համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմագիտության դոկտոր, Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր Սերգո Միկոյանը տասնյակ աշխատություններ է հրապարակել ԱՄՆ-ի, Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի երկրների վերաբերյալ: Իր ամենահայտնի գրքերից մեկը՝ «Կարիբյան ճգնաժամի անատոմիան», նա նվիրել է հորը: Իր հարցազրույցներից մեկում Սերգո Միկոյանն ասում է, որ տանը իրենք դաստիարակվել են «օրինավորության եւ դասակարգային պայքարի ոգով»:

Երեկոյի ժամանակ իր ելույթում հայտնի լրագրող միջազգայնագետ **Գենրիխ Բորովիկը**, որը Սերգո Միկոյանին ճանաչել է ուսանողական տարիներից, պատմեց Միկոյանների օրինավորության մասին: Այսպես, 1947-ին Սերգոն Կենտկոմի քարտուղար Կուզնեցովի դստեր հետ ամուսնացավ այն ժամանակ, երբ Կուզնեցովին հայտարարել էին «ժողովրդի թշնամի»: Ավելին, Անաստաս Միկոյանը նրան զանգահարեց եւ խնդրեց անպայման ներկա գտնվել դստեր հարսանիքին:

Սերգո Միկոյանի եղբայր Ստեփան Միկոյանը հայտնի փորձարկու օդաչու է, Խորհրդային Միության հերոս: Նա ներկա էր իրենց գերդաստանին նվիրված երեկոյին, շնորհակալություն հայտնեց դրա կազմակերպիչներին եւ մասնակիցներին, պատմեց որոշ դրվագներ Միկոյանների կյանքից:

«Կարիբյան ճգնաժամի անատոմիա» աշխատությունը գրելիս Սերգո Միկոյանը օգտվել է հիմնականում ամերիկյան արխիվներից: Իր հարցազրույցներից մեկում նա պատմում է, որ ռուսական արխիվներից օգտվելը մի քանի անգամ ավելի երկար ժամանակ կպահանջեր իրենից, չհաշված բազմաթիվ սահմանափակումները; Մինչդեռ ԱՄՆ-ում ինքը կարողացել է ստանալ ամեն տեսակի նյութերի պատճեններ: ԱՄՆ անվտանգության ազգային արխիվը Կոնգրեսի ընդունած Տեղեկատվության տարածման ազատության օրենքի հիման վրա ԿՀՎ-ից, պաշտպանության նախարարությունից, ՀԴԲ-ից եւ նույնիսկ Սպիտակ տնից պահանջում է գաղտնազերծել 30 տարվա վաղեմության փաստաթղթերը: Գրքում, անշուշտ, օգտագործվել են նաեւ Անաստաս Միկոյանի անձնական հուշագրությունները, Խրուշչովի հետ Քենեդու եւ Կաստրոյի նամակագրությունը, Կուբայի ղեկավարության հետ Միկոյանի բանակցության նյութերը, Խրուշչով-Միկոյան նամակագրությունը եւ այլն:

Սերգո Միկոյանը պատմում է, որ ինքը եւ իր չորս եղբայրները քիչ էին տեսնում բազմազբաղ Անաստաս Միկոյանին, բայց երբ նա տանն էր լինում, անպայման շփվում էր զավակների հետ, երբեմն բանավիճում այս կամ այն հարցի շուրջը: Հինգ եղբայրների համար երկաթյա կանոն էր դպրոցում լինել անթերի, զուսպ եւ արդարամիտ: Եղբայրներից մեկը՝ Վլադիմիրը, կամավոր գնաց ավիացիա եւ 17 տարեկանում զոհվեց Ստալինգրադի մոտ: Պատերազմին մասնակցել են եղբայրներից եւս երկուսը: Ավագը՝ Ստեփանը, 1941-ին վառվող օդանավից մի կերպ դուրս գալով եւ գիտակցությունը կորցնելով՝ փրկվել է միայն երջանիկ պատահականությամբ:

Ստալինի մահը չի վշտացրել Անաստաս Միկոյանին: Դա զարմացրել է Սերգոյին, նա այն ժամանակ չգիտեր, որ 1952-ի հոկտեմբերին Ստալինը հայտարարել էր, թե Միկոյանը եւ Մոլոտովը օբյեկտիվորեն դարձել են Արեւմուտքի գործակալներ: Այսինքն, բռնակալի մահը փրկություն է եղել Միկոյանների ընտանիքի համար:

Եթե 1930-ականներին Միկոյանը դեռ հավատում էր Ստալինին եւ անվերապահորեն նվիրված էր նրան, ապա հետպատերազմյան տարիներին ներքուստ ինչ-որ չափով սահմանազատվել էր նրանից:

Խրուշչովի դեմ կազմակերպված առաջին դավադրության ժամանակ Միկոյանը եղել է նրա կողմում: 1957-ին Մալենկովը, Կագանովիչը, Մոլոտովը եւ նրանց միացած Շեպիլովը հասարակությանը հետ էին տանում դեպի ստալինյան կարգերը: Խրուշչով-Միկոյան հարաբերությունները եւս իդեալական չէին: Խրուշչովը սիրում էր քծնողներին, իսկ Միկոյանը հաճախ վիճում էր նրա հետ: Ղեկավարի հետ Մոսկվա բերված ամբողջ «ուկրաինական մաֆիան» (Պոդգոռնի, Բրեժնեւ, Կիրիլենկո, Կիրիչենկո) կրկնում էր Խրուշչովի ասածները: Նրան դուր չէին գալիս Միկոյանի առարկությունները, որը վերջին հաշվով իրավացի էր դուրս գալիս: Դա ինչ-որ թաքուն նախանձ էր առաջացնում: Բայց երբ 1964-ին Խրուշչովի տապալմանն ուղղված քայլեր ձեռնարկեցին նրա արբանյակներ Բրեժնեւը, Պոդգոռնին եւ մյուսները, Միկոյանն առաջարկեց թողնել Խրուշչովին կառավարության ղեկավարի պաշտոնում, իսկ կոմկուսի գլխավոր քարտուղար դարձնել Բրեժնեւին: Առաջարկությունը մերժեցին՝ վախենալով Խրուշչովի վրեժխնդրությունից:

Ստալինի օրոք արտաքին առեւտրի ժողկոմ նշանակվելով՝ Միկոյանը, այնուամենայնիվ, կարողացել էր նրանից խոստում կորզել, որ «НКВД-ն չի միջամտի НКВТ-ի աշխատանքին», այսինքն՝ չեն լինի աշխատակիցների ձերբակալություններ:

Անաստաս Միկոյանը մահացավ 1978-ի հոկտեմբերի 21-ին, գրեթե 83 տարեկանում: Թաղված է Նովոդեւիչիեի գերեզմանատանը: Այնտեղ են թաղված նաեւ կինը՝ Աշխենը, կնոջ եղբայրը, գերդաստանի երեք սերունդների ներկայացուցիչներ, որդիներից Ալեքսեյը՝ երաժիշտ Ստաս Նամինի հայրը, Սերգոն եւ նրա առաջին կինը, Անաստաս Միկոյանի եղբայրը՝ նշանավոր ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանը, որը աշխարհում մինչեւ օրս բարձր գնահատվող «ՄԻԳ» ռազմօդանավերի նախագծային բյուրոյի հիմնադիրն է:

Միկոյան գերդաստանի անդամների թիվը մշտապես աճում է եւ այսօր հասնում է հինգ տասնյակի:

**Պատրաստեց Պ. Ք.**

# Իրաքի նոր դասագրքերը՝ առանց Հուսեյնի եւ «ամերիկյան օկուպացման»

Իրաքի պատմության դպրոցական եւ համալսարանական նոր դասագրքերը չպետք է հիշատակեն նախկին նախագահ Սադդամ Հուսեյնի անունը եւ օգտագործեն «ամերիկյան ներխուժում» կամ «ամերիկյան օկուպացում» արտահայտությունները: Նման հանձնարարություններով է ավարտվել կիրակի օրը Բաղդադում լուսավորության նախարարության կազմակերպած «Իրաք. նոր փուլ, նոր մոտեցումներ» կոնֆերանսը:

«Նոր ուսումնական ծրագրերը պետք է խուսափեն այն դրույթներից, որոնք կարող են տարաձայնություններ առաջացնել հասարակության մեջ», ասել է նախարարության ուսումնական ծրագրերի հանձնախմբի ղեկավար Ղազի Մութլաքը:

Նոր դասագրքերում Սադդամ Հուսեյնի կառավարման ժամանակաշրջանը պետք է ներկայացվի «շատ հակիրճ», իսկ նրա անվան փոխարեն պետք է օգտագործվեն «նախկին վարչակարգ» եւ «բռնապետ» արտահայտությունները:

2003 թ. Հուսեյնի վարչակարգի տապալումից ի վեր նորագույն պատմության նոր դասագրքերի չեն հրատարակվել: Դրանց նախապատրաստումը դժվարանում է նրանով, որ իրաքցիների մի մասը ամերիկյան զորքերի մուտքը համարում է ազատականացման եւ ժողովրդավարացման սկիզբ, մյուս մասը դա անվանում է ներխուժում եւ օկուպացում:

Չկան նաեւ կրոնի նոր դասագրքեր: Անցյալում իսլամը դպրոցներում ուսումնասիրում էին ըստ սուննիական ավանդույթի: Սակայն երկրում մեծամասնություն կազմող շիաները 2003-ի պատերազմից հետո պահանջեցին փոխել գործի դրվածքը: Հիշյալ կոնֆերանսում որոշվեց, որ յուրաքանչյուր դավանանք ինքնուրույն կզբաղվի կրոնական դաստիարակությամբ: Դպրոցներում կրոնի քննություն այսուհետեւ չի լինելու:



# Լեհաստանի նոր նախագահն է Բրոնիսլավ Կոմորովսկին



**Նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքների համաձայն՝ Լեհաստանում նախագահ է ընտրվել ազատական Բրոնիսլավ Կոմորովսկին: Ընտրական տեղամասերի 95 տոկոսի քվեաթերթիկների հաշվառումից հետո պարզվել է, որ Կոմորովսկին ստացել է քվեների 52,63 տոկոսը: Նրա մրցակիցը՝ ապրիլյան ավիավթարից զոհված նախագահ Լեխ Կաչինսկու եղբայր Յարոսլավ Կաչինսկին, ստացել է 47,37 տոկոս:**

**Ընտրությունների երկրորդ փուլում ընտրողների մասնակցության տոկոսը համեմատաբար բարձր է եղել (55,29 %), եթե նկատի ունենանք, որ 30 միլիոնանոց Լեհաստանում սկսվել է արձակուրդների շրջանը:**

**Ֆրանսպրեսը նշում է, որ Յարոսլավ Կաչինսկին, չսպասելով վերջնական արդյունքների հրապարակմանը, շնորհավորել է Կոմորովսկուն նրա հաղթանակի առթիվ: Մեկնաբաններից շատերը Կոմորովսկու հաջողությունը բացատրում են նրա նախընտրական ծրագրով, որի էական կետերից մեկը հասարակության պառակտվածության հաղթահարումն է, ազգային համաձայնության ապահովումը:**

**Կոմորովսկու աջակիցները հիմնականում հետկոմունիստական տնտեսական բարեփոխումներից օգտված անձինք են: Հաղթանակի շնորհիվ նրա «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցությունը կարող է տիրանալ երկրի ամբողջ իշխանությանը: Ենթադրվում է, որ չի կրկնվի նախագահ-վարչապետ դժվարին գոյակցությունը, որն առկա էր պահպանողական նախագահ Լեխ Կաչինսկու կողմնակիցների եւ ազատական վարչապետ Դոնալդ Տուսկի կառավարության օրոք:**

# ԶԼՄ-ների հետ Պենտագոնի աշխատակիցների շփման կանոնները խստացվել են

**Պենտագոնը խստացրել է լրատվամիջոցների հետ իր քաղաքացիական եւ զինվորական աշխատակիցների շփման կանոնները, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը բարձրաստիճան աշխատակիցներին ուղարկել է ԶԼՄ-ների հետ փոխգործողության հրահանգներ: Երեքէջանոց փաստաթղթում մտահոգություն է արտահայտվում «կանոնների եւ արարողակարգերի խախտումների» կապակցությամբ:**

**Գեյթսը հիշեցրել է, որ գաղտնի տեղեկատվության հրապարակումն անթույլատրելի է եւ ապացուցվելու դեպքում կհանգեցնի քրեական հետապնդման:**

**Նախարարը նաեւ պահանջել է հանրության հետ կապերի գծով իր տեղակալին նախօրոք հայտնել բոլոր հարցազրույցների եւ ԶԼՄ-ների հետ մյուս շփումների մասին, որոնք կարող են ազդել երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության վրա:**

**Այդ տեղակալի անունն է Դուգլաս Ուիլսոն: Վերջինս Ֆրանսպրեսի թղթակցի հետ զրուցելիս ասել է, որ փաստաթղթի նպատակը «մամուլին կամ զինվորականներին լռեցնելը չէ»: «Նախարարի կարծիքով, ներքին եւ արտաքին քաղաքականության հարցերի առթիվ մամուլի հետ շփվող բոլոր անձինք պարտավոր են լիովին ըմբռնել իրավիճակը եւ բավարար տեղեկություններ ունենալ իրենց ասածի մասին», պարզաբանել է Ուիլսոնը:**

# «Հզբոլլահի» հիմնադիրը մահացել է



**Բեյրութում մահացել է այաթոլլահ Մուհամմեդ Հուսեյն Ֆադլալլահը՝ շիա լիբանանցիների առաջնորդը, որը լիբանանյան «Հզբոլլահ» արմատական շարժման եւ շիա իրաքցիների «Ալ Դավա» կուսակցության հիմնադիրն է: Ներկայումս այդ կուսակցության առաջնորդը Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին է:**

**Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Ֆադլալլահը տառապում էր շաքարախտից, արյան գերճնշումից եւ լյարդի հիվանդությունից: Հուլիսի 2-ին նրան ծանր վիճակում տարել էին հիվանդանոց:**

**Ծագումով լիբանանցի Ֆադլալլահը մինչեւ կյանքի վերջը կապ էր պահպանում իր ծննդավայր Իրաքի հետ:**

**Ֆադլալլահը պաշտպանում էր Իրանի իսլամական հեղափոխությունը, բայց որոշ հարցերում համամիտ չէր Այաթոլլահ Խոմեյնիի հետ: Նա Այաթոլլահ Խոմեյնիին չէր համարում բոլոր շիա մահմեդականների հոգեւոր առաջնորդը: Ֆադլալլահը հավանություն չէր տալիս խալիֆության վերստեղծման գաղափարին եւ հանդես էր գալիս քրիստոնյաների հետ խաղաղ հարաբերությունների զարգացման օգտին:**

**Իր քարոզներում Ֆադլալլահը շատ ազատական մտքեր էր արտահայտում իսլամական հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ:**

**ԱՄՆ վարչակազմը 1995-ին Ֆադլալլահի անունը մտցրեց ահաբեկիչների ցանկի մեջ: Նա օժանդակում էր պաղեստինցիների դիմադրության շարժմանը, հավանություն էր տալիս հակաիսրայելական գործողություններին:**

**Ֆադլալլահի դեմ քանիցս կատարվել են մահափորձեր: 1985-ին Բեյրութում ԿՀՎ-ի կազմակերպած պայթյունից զոհվեցին ութ տասնյակ անձինք:**

ՀՀ սփյուռքի նախարարության «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական ծրագրի շրջանակներում, Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանը գումարվեց համաժողով «Արեւմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում» խորագրով: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին սփյուռքահայ ուսուցիչներ, դպրոցի տնօրեններ, սփյուռքահայ եւ հայրենի լեզվաբաններ, գրողներ եւ հյուրեր:

Նախարար **Հրանուշ Հակոբյանը**, ողջունելով ներկաներին, նշեց, որ աշխարհի շուրջ 100 երկրների 1200 դպրոցներում հայերեն է դասավանդվում, բայց ամեն տեղ` յուրովի ու ինքնուրույն դասագրքով: Եվ ահա, սփյուռքի նախարարությունն` իբրեւ աշխարհի հայության խնդիրներով մտահոգ պետական մարմին, չէր կարող անտարբեր մնալ լեզվի ու գաղթօջախներում դրա ուսուցմանը վերաբերող խնդիրներով, ուստի հենց այդ նպատակով էլ համախմբվեցին, որի գերագույն նպատակը արեւմտահայերենի միասնական դասագրքի ստեղծումն է: ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Թուրքիայից, Լիբանանից եւ Եգիպտոսից ժամանած մի քանի տասնյակ մասնագետները համաժողովի երեք

Ըստ նախարարի` լեզուն տագնապի մեջ է, եւ առաջնային խնդիրն այդ տագնապը մեղմելն է: Իսկ դրա ճանապարհը դասավանդման միասնական ծրագրի, դասագրքի ստեղծումն է եւ ուսուցիչների վերապատրաստումը հենց այդ ծրագրին: Հրանուշ Հակոբյանը բարձր գնահատեց Սփյուռքի դպրոցների ու ուսուցիչների դերն ու վաստակը, ովքեր տարիներ շարունակ բազմաթիվ սերունդներ են կրթել ու հայեցի դաստիարակություն, հայրենասիրություն սերմանել նրանց սրտերում:

Նախարարը ՀՀ նախագահի անունից «Մովսես Խորենացի» մեդալ շնորհեց համաժողովին ներկա արգենտինաբնակ **Պետրոս Հաճյանին**: Մայր հայրենիքի բարձրագույն պարգեւին արժանացած լեզվաբանը հուզվել էր անակնկալից ու իր շնորհակալական խոսքում ասաց. «Ես միշտ երազել եմ Հայաստանի մասին, բայց հայկական պետությունից պարգեւ ստանալու մասին երբեւէ չէի երազել...»:

Նշենք նաեւ, որ արեւմտահայերենի միասնական դասագրքերի ստեղծման աշխատանքների հիմնական գործառույթը կիրականացնեն հենց սփյուռքահայ մասնագետները, իսկ հայ լեզվաբաններն այն կհամակարգեն:

# «Արեւմտահայերենի ուսուցման վիճակը սփյուռքում» եռօրյա համաժողովն ավարտվեց




օրերի ընթացքում իրենց հայաստանյան գործընկերների հետ մեկտեղ քննարկեցին, վերլուծեցին ու բանավիճեցին արեւմտահայերենի դասավանդման ներկա վիճակի, դրա բարելավման շուրջը եւ արեցին արժեքավոր առաջարկություններ:

Նախարարն իր բացման խոսքում նշեց. «Այսօր Սփյուռքում ամենաահագնացող վտանգը մայրենիի կորուստն է: Ցավոք սրտի, գնալով նվազում են հայոց լեզվի կրողները: Սփյուռքում ապրող յոթ միլիոն հայերից հինգ միլիոնն արեւելահայերեն է խոսում, երկու միլիոնը` արեւմտահայերեն: Արեւելահայերենով խոսողներից միայն մեկ տոկոսն է հաճախում հայկական դպրոց, իսկ արեւմտահայերեն խոսող հատվածի տասը տոկոսը սովորում է հայկական դպրոցներում: Այս համաժողովի օգնությամբ մենք փորձում ենք մեկտեղել Սփյուռքի եւ Հայաստանի գիտական ներուժը` խնդիրներին միասնական լուծում տալու նպատակով»:

Դասագրքերը կկազմվեն տարբեր մակարդակների համար, իսկ յուրաքանչյուր համայնքում դրանք կմշակվեն տվյալ երկրին ու համայնքին բնորոշ համալրումներով: Լեզվաբանների կարծիքով, լեզուն ինքնակամ երեւույթ է եւ մտածողության ձեւ: Ուստի դասագրքեր ստեղծելիս եւ ուսուցիչներին վերապատրաստելիս պետք է ճշգրիտ կառուցել լեզվի ճյուղերի դասավանդման հերթականությունը, որպեսզի խառնաշփոթ չստացվի:

Երեկ, համաժողովի վերջին օրը նախարար Հրանուշ Հակոբյանը հանդես եկավ ամփոփիչ ելույթով ու ներկայացրեց ընդունված համատեղ հայտարարության տեքստը, որից հետո հաստատվեց նորաստեղծ համակարգող խորհրդի կազմը:

«**Ազգը**» խնդրեց Եգիպտոսի ՀԲԸՄ շրջանակային հանձնաժողովի ատենապետ **Պերճ Թերզյանին** կարծիք հայտնել համաժողովի աշխատանքների մասին. «Հայաստանի անկախությունից հետո, 19 տարի անց, առաջին անգամն է, որ այսպիսի պատմական առիթը քով-քովի բերեց հայրենիքի ու Սփյուռքի կրթության մասնագետներին ու պատասխանատուներին, զբաղվելու սփյուռքում արեւմտահայերենի վիճակով ու խնդիրներով: Եվ այդ իրականացավ շնորհիվ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ջանքերի: Բարձրացված հարցերը, խնդիրները, որոնք գրեթե շատ չեն տարբերվում տարբեր համայնքներում, որտեղ դասագրքերի հրատապ կարիքը կա, պատրաստված ուսուցիչների կարիքը կա, այս նոր համակարգող խորհուրդը, կարծում եմ, կկարողանա մասնագիտական քննարկումների միջոցով գտնել հարցերի լուծման բանալին եւ ձեւերը, որպեսզի չկորցնենք արեւմտահայերենը», ասաց պրն Թերզյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Ծաղկաձոր

## Սերժ Թանգյանը կրկին հիացրեց



System of a Down խմբի հայտնի երգիչ Սերժ Թանգյանը հունիսի 24-ին Պրահա էր եկել «Ընտրիր մահը սիմֆոնիայի» կատարմամբ եւ նվագակցությամբ Չեխիայի ազգային սիմֆոնիկ նվագախմբի` դիրիժոր Յան Խալուպեցկու փայլուն ղեկավարությամբ: Ու թեեւ Incheba Arena համերգասրահում հնարավոր էր ունկնդրել միայն կանգնած եւ օդն էլ հեղձուցիչ էր, սակայն մոտ 1.5 ժամ չեխ երիտասարդությունը ձայնակցեց ու ստարեց Սերժ Թանգյանին: Չեխ երկրպագուներից մեկը նույնիսկ ինտերնետային խանութից հայկական դրոշ էր գնել եւ իր հետ բերել համերգի` այդպիսով իր սերը արտահայտելով Թանգյանի եւ նրա ստեղծագործության նկատմամբ: Իսկ Թանգյանը մի անգամ եւս ցույց տվեց իր բարձր պրոֆեսիոնալիզմը եւ դահլիճին մագնիսացնելու մեծ ուժը: Սիմֆոնիկ նվագախմբի հետ նվագում էին նաեւ Սերժին նվագակցող խմբի կիթառահար Դան Մոնթին եւ դաշնակահար Էրվին Խաչիկյանը:

Ինչպես եւ 2008-ի Օստրավայի համերգին, այս անգամ էլ մեծ թվով երիտասարդներ էին եկել հարեւան եվրոպական պետություններից: Սերժի եվրոպական շրջագայության հաջորդ համերգը կայացավ հունիսի 30-ին` Բեռլինում:

Հ.Ա.
Պրահա

## «Իմ սիրտը լեռներում է» պիեսը Նյու Ջերսիի բեմում

Հունիսի 26-ին եւ 27-ին Նյու Յորքի Թեքեյան մշակութային միութենական կազմակերպությամբ Նյու Ջերսիի «Դուայթ Էնգլվուդ դպրոցի» դահլիճում ներկայացվել է Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

ԹՄՄ-ի Մհեր Մկրտչյանի անվան թատերախումբը, որ բազմիցս հիացրել է հանդիսատեսներին բարձրորակ ներկայացումներով, այս անգամ Սարոյանի պիեսը ներկայացրել է Հայաստանից հրավիրված դերասան, երգիչ եւ նկարիչ Հովհաննես Բաբախանյանի բեմադրությամբ:

1970-ականներին Հայաստան այցելելով եւ Վարդան Աճեմյանի բեմադրությունը տեսնելով` Սարոյանը հիացած է մնացել եւ խոստովանել, որ Աճեմյանը «ծավալուն եւ հաջողված ներկայացման է վերածել ընդամենը մի կարճ պատմվածք»:

Ներկա բեմադրության պրոդյուսերի պարտականություններն ստանձնել է Հարութ Չաքմաքջյանը:

Թերթը հիշեցնում է, որ Բաբախանյանը մայիսի 2-ին մեծ հաջողությամբ ներկայացրել է իր «Թավջութակ» թատերական մոնոպիեսը:

Հ. Ծ.



# Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախմբի շլացուցիչ հաջողությունը մայր հայրենիքում

«**Ազգը**» արդեն տեղեկացրել էր, որ ՀՀ սփյուռքի նախարարության «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում Հայաստան հյուրախաղերի էր հրավիրվել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայ երիտասարդաց ընկերակցության (ՀԵԸ) Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախումբը: Կիրակի օրը, հուլիսի 4-ին, Հ. Պարոնյանի երաժշտական թատրոնը լեփ-լեցուն էր թատերասեր հանդիսատեսներով, որոնք վաղուց սպասում էին փափազյանցիներին: Արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի բեմադրությամբ Հ. Պարոնյանի «Շողոքորթը» կատակերգությունը հրաշալի ընդունվեց: Հարկ է նշել դերասանների` Մանուել Մարգարյանի, Հարութ Թորոսյանի, Արփի Ավետիքյանի, Հարութ Մանուկյանի, Հովակիմ Քեշիշյանի, Վարյա Բուռնազյանի, Վարդան Մկրտչյանի, Սաքո Օհանյանի եւ Հովիկ Գաթրճյանի հումորով, երգուպարով համեմված դերասանական խաղը, որն ամեն մի մուտքից հետո արժանանում էր հայաստանյան թատերասերների ծափերին եւ գովեստի արտահայտություններին: Հիրավի, դերասանների ոգեւորությունն ու նվիրվածությունը լրացնում էր պրոֆեսիոնալիզմի պակասը եւ արդեն դրական տրամադրված թատերասերներն այնքան բավականություն ստացան, որքան պրոֆեսիոնալ մեր թատրոններից:





Ներկայացման ավարտին «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն **Թամարա Պողոսյանը** ողջունեց «Վահրամ Փափազյան» թատերախմբին ու ներկայացրեց ողջ տարվա ընթացքում համահայկական փառատոնի շրջանակներում անցկացվող միջոցառումները: Թատերախմբի ատենապետ **Տրդատ Ավետիքյանը** ՀԲԸՄ-ի, ՀԵԸ-ի եւ թատերախմբի վարչության ու նաեւ թատերախմբի անունից շնորհակալություն հայտնեց հայաստանյան բեմում «Վահրամ Փափազյան» թատերախմբին նման անբացատրելի զգացումներ ու պատվի արժանացնելու համար: «Սփյուռքահայ արվեստագետի համար, մանավանդ սիրողական արվեստագետի, նշեց պրն Ավետիքյանը, երազ է եւ մեծ ցանկություն հայրենիքի բեմում, բծախնդիր թատերասերներին հրամցնել արվեստի գործ ու արժանանալ ջերմ ընդունելության: «Վահրամ Փափազյան» թատերախումբն այսօր հպարտ է, որ նշում է իր հիմնադրման 50-ամյակը եւ այն կիսում հայրենի ժողովրդի, հայրենի արվեստի ու մշակույթի արժեքավոր ներկայացուցիչների հետ...»:

Պրն Ավետիքյանը հատուկ շնորհակալություն հայտնեց պրոֆեսոր Ղազանչյանին, որը տասը տարի շարունակ բեմադրություններ է ստեղծում փափազյանականների համար: Տրդատ Ավետիքյանը նաեւ հատուկ շնորհակալություն հայտնեց հայրենի կառավարությանն ու մշակույթի նախարարությանը, Սփյուռքի նախարարությանը, «Մեկ ազգ, մեկ մշակույթի» հիմնադրամին եւ Հ. Պարոնյանի թատրոնին հանձնեց հատուկ հուշանվերները:

ՀՀ մշակույթի նախարարության արվեստի վարչության պետ **Սոնա Հարությունյանը** նախարարության բարձրագույն Ոսկե մեդալներ հանձնեց Տրդատ Ավետիքյանին` Հայաստան-Սփյուռք թատերական, մշակութային կապերի ամրապնդման ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար: Ոսկե մեդալի արժանացան նաեւ թատերախմբի երկարամյա բեմական վաստակ ունեցող դերասան Մանուել Մարգարյանը եւ թատերախմբի ղեկավար Մաթեւոս Ավագյանը: Մշակույթի նախարարության պատվոգրով պարգեւատրվեց թատերախմբի ատենադպրուհի Մարո Թելվիզյանը:

Ծափերի ու ծաղկեփնջերի տարափ էր տեղում Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախմբի ու նրա ղեկավարների, աջակիցների` քրտնաջան աշխատանքի գոյացուցիչ ու տպավորիչ հաղթանակի արժանանալու առթիվ, որը դեռ իր շարունակությունն է ունենալու Արտաշատի թատրոնում եւ գերելու է թատերասերների սրտերը, թողնելով անջնջելի տպավորություններ:

Ս. Ս.

AZG NEW PDF.qxd 05/07/2010 21:36 Page 1



# Գյանը, Աստծո ձեռքն ու Կասիլյասը

## Ուրախության եւ տխրության արցունքներ

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը թեւակոխել է վճռորոշ փուլ: Մեկնարկի դուրս եկած 32 հավաքականներից ասպարեզում մնացել են չորսը, որոնք շարունակում են պայքարը չեմպիոնի տիտղոսի համար:

Լավագույն քառյակից ամենատպավորիչն այժմ Գերմանիայի հավաքականի ելույթն է: Գերմանացիները խաղային բոլոր առումներով գերազանցեցին արգենտինացիներին՝ 4-0 հաշվով ջախջախելով մրցակցին: Այդ խաղում 2 գոլ խփելով, Միրոսլավ Կլոզեն աշխարհի առաջնություններում իր գոլերի ընդհանուր քանակը հասցրեց 14-ի եւ հավասարվեց լեգենդար Գերդ Մյուլլերին: Այժմ վտանգված է Ռոնալդոյի արդյունավետության ռեկորդը, որը 15 գոլ է խփել:



Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Յոահիմ Լյով (Գերմանիա)**-Հիացած եմ թիմի ցուցադրած խաղից ինչպես այս հանդիպումում, այնպես էլ ողջ մրցաշարում: Արդեն 2-րդ խաղում մենք բարձրակարգ ֆուտբոլ ցուցադրեցինք: Գերմանիան լուրջ հայտ ներկայացրեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը 4-րդ անգամ նվաճելու համար:

**Դիեգո Մարադոնա (Արգենտինա)**-Այսօր պարտվեցինք, խորը նոկաուտում եմ, կարծես Մոհամեդ Ալիի հուժկու հարվածն եմ ընդունել: Չնայած այս պարտությանը, հպարտ եմ այն 23 ֆուտբոլիստներով, որոնք պաշտպանեցին երկրի պատիվը: Նրանցից յուրաքանչյուրն արտերկրում հիանալի կարիերայի է հասել եւ կարող էր այստեղ կես ուժով խաղալ: Սակայն նրանք ցանկանում էին Արգենտինային փառքի հասցնել, ուստի յուրաքանչյուր խաղում ողջ ուժերը նվիրում էին հաղթանակի համար:

Ի դեպ, Մարադոնան չի շտապում հրաժարական տալ: Նա հայտարարել է, որ մինչեւ որոշում կայացնելը կխորհրդակցի ընտանիքի եւ հավաքականի ֆուտբոլիստների հետ: Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Խուլիո Գրոնդոնան Մարադոնային խնդրել է շարունակել աշխատանքը հավաքականում գոնե մինչեւ օգոստոսի 11-ը, երբ կկայանա ընկերական մրցախաղն իռլանդացիների հետ: Գրոնդոնան ցանկանում է, որ Մարադոնան մարզի հավաքականը մինչեւ 2011-ին Արգենտինայում կայանալիք Ամերիկայի գավաթի խաղարկությունը:

Քառորդ եզրափակիչ մյուս երկու հանդիպումներն առանձնացան պայքարի արտակարգ լարվածությամբ ու դրամատիզմով՝ պայմանավորված 11 մ հարվածներով:

Ուրուգվայ-Գանա մրցախաղում բեկումնային պահը 120-րդ րոպեն էր: Լրացուցիչ ժամանակի (հիմնականն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1) վերջին րոպեին Գանայի հավաքականն իսկական խառնաշփոթ էր ստեղծել մրցակցի տուգանային հրապարակում: Ադիյայի հարվածից հետո ուրուգվայցի Լուիս Սուարեսը ստիպված էր ձեռքով գնդակը հանել դատարկ դարպասից, որի համար հեռացվեց խաղադաշտից, իսկ Գանայի հավաքականը 11 մ հարվածի իրավունք ստացավ: Գանացի Գյանը մի ակնթարթում կարող էր ազգային հերոս դառնալ ու իր հավաքականին աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ կիսաեզրափակիչի ուղեգիր պարգեւել: Սակայն նրա հարվածը դիպավ դարպասի հորիզոնական ձողին: Իսկ երբ ուրուգվայցիները հաջող իրացրին հետխաղյա 11 մ հարվածները (4-2) ու կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեցին, Գյանը չէր կարողանում իրեն ներել վրիպման համար՝ արտասվելով: Իսկ ահա Սուարեսի ուրախությունը սահման չուներ, որը վերածվել էր Ուրուգվայի հավաքականի փրկչի: Ըստ Սուարեսի, իրենց փրկեց Աստծո ձեռքը, որն այժմ իրենն է:

Էլ ավելի դրամատիկ իրադարձություններ ծավալվեցին Իսպանիա-Պարագվայ մրցախաղում՝ կապված 11 մ հարվածների հետ: 59-րդ րոպեին, երբ հաշիվը դեռ չէր բացվել, պարագվայցիները 11 մ հարվածի իրավունք ստացան, սակայն Կարդոսոյի հարվածը որսաց Կասիլյասը: Խաղից հետո վերջինս նշել էր, որ այդ հարցում իրեն օգնեց Պեպե Ռեյնան՝ հուշելով, թե որ անկյունն է խփելու Կարդոսոն: Հետեւեց իսպանացիների գրոհը եւ արդեն պարագվայցիները խախտեցին կանոնները: Խաբի Ալոնսոյի հարվածը դիպուկ էր, սակայն մրցավարը կրկնել տվեց 11 մ-ի իրացումը: 2-րդ անգամ արդեն Խուստո Վիլյարը հետ մղեց հարվածը:

Այսքանից հետո իսպանացիներին, այնուամենայնիվ, հաջողվեց խփել հաղթական գոլը, որի հեղինակը Դավիթ Վիլյան էր, որն էլ գլխավորեց առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը:

Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Դել Բոսկե (Իսպանիա)**-Մենք ընդգրկվել ենք լավագույն քառյակում: Ճիշտ է, այնքան էլ լավ չխաղացինք, սակայն թիմի գործողություններում դրական պահեր էլ կային: Պարագվայը հիանալի տպավորություն թողեց: Սակայն մենք արժանի էինք հաղթանակին, քանի որ գոլային ավելի շատ պահեր ստեղծեցինք: Մրցակիցը մեզ զրկել էր գնդակն ազատ ընդունելու հնարավորությունից: Կիսաեզրափակիչ մտնելը ֆանտաստիկ նվաճում է: Գերմանիայից չպետք է վախենալ: Իսկ ահա հարգել հարկավոր է: Գերմանացիները հիանալի դրսեւորեցին իրենց արգենտինացիների հետ խաղում:

**Հերարդո Մարտինո (Պարագվայ)**-Հիանալի հնարավորություն ունեինք մտնելու կիսաեզրափակիչ: Ես դա ամբողջ խաղի ընթացքում զգում էի: Մենք իսպանացիների հետ հավասար պայքար մղեցինք, սակայն խաղավերջում մեզ ինչ-որ բան չբավականացրեց: Խաղը ցույց տվեց, որ ցանկացած հզոր մրցակցի դեմ կարող ենք պայքարել: Պարագվայի ֆուտբոլը մտնում է զարգացման նոր փուլ:

Այսօր կայանալիք Ուրուգվայ-Հոլանդիա կիսաեզրափակիչ խաղում հայտնի կդառնա եզրափակիչի առաջին մասնակիցը: Վաղը տեղի կունենա Գերմանիա-Իսպանիա մրցախաղը: Երկու հանդիպումներն էլ կսկսվեն ժամը 23.30-ին:

# Նադալն ու Ուիլյամսը գերազանցեցին մրցակիցներին

**Իսպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալն իր կարիերայում 2-րդ անգամ դարձավ Ուիմբլդոնի մրցաշարի հաղթող՝ եզրափակիչում պարտության մատնելով չեխ Թոմաշ Բերդիխին (6-3, 7-5, 6-4): Առաջին անգամ նրան Ուիմբլդոնում հաջողությունն ուղեկցել էր 2 տարի առաջ, երբ հաղթել էր շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերին՝ ընդհատելով նրա 5 անընդմեջ հաղթանակների շարքը:**



**«Յուրաքանչյուր հաղթանակ ինքնանպատակ է: Դժվար է ասել, թե որ տիտղոսն է ավելի արժեքավոր: Գուցե առաջին հաղթանակս Ուիմբլդոնում ավելի դրամատիկ պայքարում ձեռք բերվեց: Շնորհակալ եմ հանդիսականներից, որոնք ջերմորեն աջակցում էին ինձ: Այժմ հարկավոր է լավ հանգստանալ, ապաքինվել վնասվածքներից ու նախապատրաստվել ԱՄՆ-ի բաց առաջնությանը: Ես ֆուտբոլի ջերմ երկրպագու եմ, ուրախ եմ Իսպանիայի հավաքականի հաջողության համար: Մտապես հաղորդակցվում եմ հավաքականի ֆուտբոլիստների հետ: Եթե մրցաշարը ՀԱՀ-ում չանցկացվեր, ինձ համար հեշտ կլիներ ներկա գտնվել եզրափակիչին», խաղից հետո նշել է Նադալը:**

**Կանանց մրցաշարում ռուսաստանցի Վերա Զվոնարյովային չհաջողվեց եզրափակիչում հաղթել Սերենա Ուիլյամսին (3-6, 2-6): Ամերիկացի թենիսիստուհին 4-րդ անգամ հաղթող ճանաչվեց Ուիմբլդոնում, իսկ Զվոնարյովայի կարիերայում դա «Մեծ սաղավարտի» մրցաշարերում առաջին եզրափակիչն էր: Հետաքրքիրն այն է, որ Սերենային Զվոնարյովան Ուիմբլդոնում հաղթել էր զուգախաղում՝ Ելենա Վեսնինային ընկերակցելով: Զվոնարյովա-Վեսնինա զույգը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվեց Վանյա Քինգ-Յարոսլավա Շվեդովա երկյակին (6-7, 2-6):**

**Տղամարդկանց զուգախաղում հաջողության հասավ Յուրգեն Մելցեր-Ֆիլիպ Պետցշներ զույգը՝ հաղթելով Ռոբերտ Լինդստեդ- Խորյա Տեկեու երկյակին (6-1, 7-5, 7-5):**

**Խառը զուգախաղում ուժեղագույնը Լեանդր Պաես-Կարա Բլեկ զույգն էր, որը հաղթեց Ուեսլի Մուդի-Լիզա Ռեյմոնդ երկյակին:**

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Հայ ըմբիշներից երկուսը դարձան մրցանակակիր

**Բուլղարիայի Սամակով քաղաքում անցկացված ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում հայ ըմբիշները 2 մեդալ նվաճեցին: Առավել հաջող էր 84 կգ քաշային Արթուր Ալեքսանյանի ելույթը, որը հաղթելով մրցակիցներին, մտավ եզրափակիչ: Այստեղ նա զիջեց թուրք Ասլան Ատեմին ու արժանացավ արծաթե մեդալի: 66 կգ քաշայինների պայքարում բրոնզե մրցանակակիր դարձավ Գեւորգ Սահակյանը՝ վճռորոշ գոտեմարտում պարտության մատնելով Խորվաթիայի ներկայացուցիչ Դոմինիկ Էտլինգերին: Մեր երկու ըմբիշներն էլ հունահռոմեական ոճի ըմբշամարտի ներկայացուցիչներ են: Իսկ ահա ազատ ոճայինները տուն վերադարձան ձեռնունայն:**

# «Փյունիկը» վերջապես հաղթեց

**Երեք անընդմեջ պարտություններից հետո երկրի չեմպիոն «Փյունիկը» վերջապես հաղթեց՝ 4-2 հաշվով առավելության հասնելով «Կիլիկիայի» նկատմամբ: Սակայն հաղթանակը թիմին դժվարությամբ տրվեց: Արդեն 10-րդ րոպեին Մարկոսն առաջ մղեց «Փյունիկին», սակայն 11 րոպե անց Կարեն Խաչատրյանը վերականգնեց հավասարակշռությունը: Քիչ անց փյունիկցիները 11 մ հարվածի իրավունք ստացան, սակայն Մարկոսը չկարողացավ հաղթող դուրս գալ Մարտիկ Մկրտումյանի հետ մենամարտում:**

**Ընդմիջումից հետո կրկին աչքի ընկավ Կարեն Խաչատրյանը՝ «Կիլիկիային» հաշվի մեջ առաջ մղելով: Չեմպիոնը կրկին հայտնվեց պարտության վտանգի առաջ: Եվ միայն 70-րդ րոպեին թիմի նորեկ Հովհաննես Գոհարյանը հավասարեցրեց հաշիվը: «Փյունիկը» հաղթանակը կորզեց խաղավերջում, երբ մեկը մյուսի հետեւից Արտակ Եդիգարյանն ու Մարկոսը գրավեցին «Կիլիկիայի» դարպասը:**

**Չեմպիոնների լիգայի մեկնարկից առաջ «Փյունիկի» խաղն իրոք մտահոգում է: Ինչպես խաղից հետո նշեց Վարդան Մինասյանը, խնդիրներ կան կազմի ուժեղացման հետ: Առայժմ թիմ հրավիրված Գոհարյանը լավ մարզավիճակում չէ եւ ամբողջ 90 րոպե դժվար թե կարողանա օգտակար լինել «Փյունիկին»: Լուծված չէ նաեւ ձախ պաշտպանի հարցը:**

**Տուրի մյուս խաղում, Կապանում «Գանձասարը» 1-2 հաշվով զիջեց «Իմպուլսին»: Վերջինիս կազմում աչքի ընկան Ալբերտ Հովակիմյանն ու Արման Մինասյանը, իսկ խաղավարսին Արթուր Քոչարյանը կրճատեց հաշիվը: «Շիրակ»-«Բանանց», «Միկա»-«Ուլիս» հանդիպումները հետաձգվել են Եվրոպայի լիգայի խաղերի պատճառով:**

# Ջերմուկում ուժեղագույնը Նանա Ձագնիձեն է



**Ջերմուկում վերջնագիծը հատեց շախմատի կանանց Գրան պրիի 4-րդ մրցաշարը: 12 մասնակիցների մեջ լավագույն արդյունքի հասավ եւ մրցաշարի հաղթող դարձավ վրացի շախմատիստուհի Նանա Ձագնիձեն, որը 11 հնարավորից վաստակեց 9 միավոր: Ավարտական 3 պարտիաներում էլ Ձագնիձեն հաշտություն կնքեց Շեն Յանի, Հու Յուհուայի եւ Հոու Յիֆանի հետ:**

**Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը վաստակեցին 6,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով Լիլիթը գրավեց 3-րդ տեղը, Էլինան հանգրվանեց 5-րդ հորիզոնականում: Լիլիթը հաշտություն կնքեց Պիա Կրամլինգի, Շեն Յանի եւ Բահրա Կովանովայի հետ: Էլինան վերջնագծում ավելի հաջող խաղաց՝ հաղթելով Բահրա Կովանովային եւ Տատյանա Կոսինցեւային, ոչ-ոքի խաղալով Մարթա Ֆիեռոյի հետ:**

**Լիլիթ Մկրտչյանը եւ Էլինա Դանիելյանը տոնեցին 4 հաղթանակ, 5 պարտիա ավարտեցին ոչ-ոքի, կրեցին 2 պարտություն:**

**Հաղթողից 1,5 միավորով հետ մնաց ռուսաստանցի Տատյանա Կոսինցեւան: 4-րդ տեղում 6,5 միավորով Անտոանետա Ստեֆանովան է: Մյուս մասնակիցների արդյունքներն այսպիսին են. Հոու Յիֆան՝ 6, Պիա Կրամլինգ՝ 5,5, Շեն Յան՝ 5,5, Մայա Չիբուրդանիձե՝ 4,5, Հու Յուհուա՝ 4, Բահրա Կովանովա՝ 3, Մարթա Ֆիեռո՝ 1,5:**

# Եզրափակիչում զիջեցին Մալթային

**Երեւանում ավարտվեց կանանց բասկետբոլի C խմբի Եվրոպայի առաջնությունը: Հայաստանի հավաքականը, որ 4 անընդմեջ հաղթանակ էր տոնել, եզրափակիչում 65-74 հաշվով զիջեց Մալթայի ընտրանուն, որը դարձավ մրցաշարի հաղթող: Չնայած դրան, Հայաստանի հավաքականը Մալթայի հետ կմասնակցի B խմբի Եվրոպայի առաջնությանը:**

**Մրցաշարի լավագույն բասկետբոլիստուհի ճանաչվեց Հայաստանի հավաքականի անդամ Քրիստինե Քեփենեկյանը:**

# Դունգան հրաժեշտ տվեց հավաքականին

Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես հայտարարել է, որ Դունգան հեռացել է հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնից: Այդ պաշտոնի հավակնորդներից մեկը՝ Լուիս Ֆելիպե Սկոլարին հայտարարել է, որ ինքը չի պատրաստվում գլխավորել հավաքականը: Գլխավոր թեկնածուն Լեոնարդոն է:

Հոլանդիայի հավաքականից կրած պարտությունից հետո Դունգան հետեւյալն էր հայտարարել. «Ես եմ Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչը եւ պատասխանատու եմ այն ամենի համար, ինչ տեղի է ունեցել: Որպես մարզիչ վստահ եմ, որ մեղքը բոլորինս է: Ինչ վերաբերում է ապագայիս, ապա անսպասելի ոչինչ չկա: Բոլորն էլ գիտեին, որ աշխատում եմ 4-ամյա ցիկլով»:

# «Շախտյորն» Ուկրաինայի եռակի սուպերգավաթակիր

Սուպերգավաթի խաղարկությամբ Ուկրաինայում մեկնարկեց ֆուտբոլային նոր մրցաշրջանը: Երկրի չեմպիոն «Շախտյորը» Զապորոժիեում անցկացված մրցախաղում 7-1 հաշվով ջախջախեց «Տավրիային»: «Շախտյորը» 3-րդ անգամ դարձավ Ուկրաինայի սուպերգավաթակիր: Նախկինում թիմը հաջողության էր հասել 2005-ին եւ 2008-ին: Երկու դեպքում էլ «Շախտյորը» 11 մ հարվածներով (հիմնական ժամանակում՝ 1-1) առավելության է հասել Կիեւի «Դինամոյի» նկատմամբ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Ադրբեջանում ցանկանում են, որ Հայաստա՞նն էլ օգտվի Բաքու-Ջեյհանից

## *Քլինթոնի այցի ադրբեջանական արձագանքը*

Բաքվում ռազմատենչության ու սպառնալիքների տոնայնությունը մեկ օրով կարծես փոխվել էր բանականության սահմաններում ճառ ասող «խաղաղասեր» դիվանագետների «խրատաբանական զրույցների»: Զարմանալի է, որ Ադրբեջանի՝ պատերազմից հոխորտացող նախագահ Ալիեւ կրտսերը հուլիսի 4-ին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ Բաքվում տեղի ունեցած հանդիպմանը ոչ միայն չի փորձել խոսել սպառնալիքներից, այլեւ դժգոհել է ԱՄՆ-ի ներկայացուցչին, թե ղարաբաղյան հարցը Ադրբեջանի ամենամեծ խնդիրն է:

Ստանդարտ լացուկոծը, թե հայկական ուժերը «օկուպացրել են Ադրբեջանի տարածքի այսքան տոկոսը», այնքան էլ համահունչ չէ Ալիեւի այն խոսքերին, թե Ադրբեջանն ուզում է հարցը լուծել միջազգային իրավունքի հիման վրա: Ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ, ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն, իր հերթին, շնորհակալությունների կողքին ասել է, թե ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի նախագահի միջեւ «վերջին 18 ամիսներին պարբերական ու բովանդակալից զրույցներ են տեղի ունեցել»:

Քլինթոնը Բաքվում խոստացել է, թե Երեւանում կարծարծի ադրբեջանցի զինվորականի դին վերադարձնելու հարցը, այս համատեքստում էլ խոսելով հունիսի 18-19-ին տեղի ունեցած միջադեպից: ԱՄՆ պետքարտուղարը հայտարարել է. «1994թ. զինադադարի համաձայնագիրը պետք է պահպանվի ու մնա ուժի մեջ»:

Որոշ հայտարարություններ էլ, որ ներկայացվում են Քլինթոնի անունից, տարակուսանք են հարուցում: ԱՄՆ պետքարտուղարությունում թերեւս կարիք, եթե, իհարկե, նաեւ ցանկություն ունենան, ամենայն հավանականությամբ նույն տեքստով Հայաստանում եւ Ադրբեջանում ելույթ ունեցած Քլինթոնի խոսքերի առնչությամբ հրապարակումներին հետեւելու, քանի որ ադրբեջանական լրահոսում, հասկանալի «մոտեցմամբ», ստացվել է, թե Քլինթոնը հելսինկյան սկզբունքների մասին խոսելիս առանձին նշել է տարածքային ամբողջականության մասին եւ հետո միայն խոսել հելսինկյան սկզբունքներից, կարծես դրանք մեկ ամբողջական փաստաթղթի մաս չեն:

Բաքվում պետքարտուղարը հայտարարել է, թե Միացյալ Նահանգները հակամարտություն չի կարող լուծել, այլ կարող է օգնել կողմերին հասնելու համաձայնության: Մյուս կողմից, եւս մեկ տարօրինակ հայտարարություն վերագրվում է Քլինթոնին: Ըստ այդմ, պետքարտուղարը Բաքվում հայտարարել է, թե «խաղաղության տանող վերջին քայլերը ամենադժվարն են»: Իսկապես Քլինթոնը կարող է ասել, թե բանակցություններում հասել են «վերջին քայլերին», որ դրանք էլ դեռ ամենադժվարը լինե՞ն:

Թե ժողովրդավարության առնչությամբ ինչ հարցերի է անդրադարձել ԱՄՆ պետքարտուղարը Ադրբեջանում երիտասարդության հետ հանդիպմանը, ինչու չէ, նաեւ Հայաստանում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ զրույցում, այնքան էլ միանշանակ ու ուղղամիտ չի կարող լինել, քանի որ հրաշալիորեն հայտնի են ԱՄՆ արժեքային համակարգի «տեղային» կիրառման բազմաթիվ օրինակներ:

Հաստատապես դժվար է հավատալ, թե ԱՄՆ պետքարտուղարն իրեն թույլ է տվել Բաքվում ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հանդիպմանը հայտարարել, թե «Աշխարհում դեռեւս կան պետություններ, որ չեն հաշտվում Ադրբեջանի անկախության հետ, ուստի մենք պետք է աջակցենք Ադրբեջանին անվտանգության հարցերում»: Այս եւ նմանատիպ հայտարարությունները, որ վերագրվում են Քլինթոնին, հստակեցման կարիք ունեն:

Ամեն դեպքում, Ադրբեջանի նախագահի առանձնակի բան չասող հայտարարությունների ֆոնին լռության տարբերակից վերջերս հաճախ օգտվող ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը մի քանի բան ասել է, ընդ որում, զարմանալիորեն «հաշտ ու խաղաղ» կեցվածք ցուցադրող դիվանագետի դիրքերից:

Մասնավորապես, Մամեդյարովը օդանավակայանում Քլինթոնի հրաժեշտից առաջ տեղի ունեցած համատեղ ասուլիսում հայտարարել է, թե Ադրբեջանն այն փոքրաթիվ երկրներից է, որ կարող է ասել, թե Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի շինարարության եւ բացման օգնությամբ ստացված ֆինանսները «իրական բարգավաճման են բերում Ադրբեջանում, միեւնույն ժամանակ օժանդակություն ցուցաբերելով նաեւ Վրաստանին»:

«Մենք նույնը ցանկանում ենք նաեւ Հայաստանի առնչությամբ: Բայց այստեղ մենք գալիս ենք ղարաբաղյան խնդրին. հենց մենք կարգավորենք հակամարտությունը կամ, ծայրահեղ դեպքում, կանենք առաջին քայլը՝ կիրագործենք համանախագահների առաջարկած ծրագիրը, կարծում եմ, լուրջ ճեղքում կլինի հարավկովկասյան բոլոր երեք պետություններում», ասել է Մամեդյարովը: Ադրբեջանի ԱԳ նախարարի հիշողությունը հիշեցումների կարիք ունի թերեւս, քանի որ այս հայտարարությունը, որ կարծես միայն Քլինթոնի ականջի համար է արվել, որեւէ կերպ չի տեղավորվում Ադրբեջանի նախագահի՝ Հայաստանը մեկուսացնելու սպառնալիքների տրամաբանության մեջ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մադրիդյան սկզբունքների վերջին տարբերակ...

*1-ին էջից*

**Նալբանդյանը նշել է, որ Լեռնային Ղարաբաղի «լիակատար մասնակցությունը խաղաղ կարգավորման բանակցություններին անհրաժեշտություն է եւ գործընթացի արդյունավետության երաշխիք, քանի որ առանց Արցախի անհնար է համաձայնության գալ»:**

**Օրակարգում է եղել նաեւ հուլիսի կեսերին Ալմաթիում կայանալիք ԵԱՀԿ արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում նախարարական մակարդակով հնարավոր հանդիպման կազմակերպումը, որի մասին Նալբանդյանը հիշատակեց նաեւ հուլիսի 4-ին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ համատեղ ասուլիսում:**

**Ինչեւէ, երեկ, նախատեսված այսօրվա փոխարեն, համանախագահներն արդեն հանդիպումներ էին ունենում Բաքվում, մինչ այդ հուլիսի 4-ին հասցնելով Բաքվում հանդիպել նաեւ Ադրբեջանում գտնվող ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ:**

**«Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, համանախագահները Բաքվում Քլինթոնի հետ քննարկել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ներկա վիճակը: Մինչդեռ, ըստ ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովի՝ Ստեփանակերտում արած հայտարարության, Քլինթոնի հետ քննարկվելիք թեմաների շարքում են եղել ինչպես պետերբուրգյան եռակողմ հանդիպմանն արծարծված հարցեր, այնպես էլ հունիսի 18-ին շփման գծում տեղի ունեցած միջադեպը:**

Ա. Հ.

# Առաքելություն դեպի «օկուպացված տարածքներ»

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ակնկալում են, որ Ալմաթիում ԵԱՀԿ ԱԳ նախարարների ոչ պաշտոնական գագաթաժողովի շրջանակներում տեղի կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների եւ գագաթաժողովում նրանց պատվիրակությունների ղեկավարների հանդիպումը: Այսպիսի հայտարարություն են տարածել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ հուլիսի 3-5-ը տարածաշրջան այցելությունից հետո:

Հայտարարության մեջ եւս մեկ անգամ շեշտվում է, որ Երեւանում եւ Բաքվում համանախագահները ընդգծել են ղարաբաղյան հարցի՝ հելսինկյան երեք սկզբունքների հիման վրա լուծելու մոտեցման ընդունելիությունը: Մինսկի խմբի համանախագահները կողմերին «կոչ են անում առաջ շարժվել եւ հաջորդ քայլն անել հիմնարար սկզբունքների ամբողջացման ուղղությամբ՝ հնարավորություն ստեղծելով խաղաղ համաձայնագրի մշակման համար»: Համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Բեռնար Ֆասիեն եւ Իգոր Պոպովը, հայտարարության համաձայն, կողմերին են ներկայացրել «այս աշնանը օկուպացված տարածքներ առաքելությամբ այցելելու իրենց ծրագիրը, որ սկզբունքորեն ընդունվել է»:

Ա. Հ.

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ԱՐՖԻՆ» ՎՄ ՍՊԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքերի աճուրդային վաճառքը՝

-Բնակարան 79.36 ք.մ.: Հասցե՝ ք. Երեւան, Նոր-Նորք համ., Մայակ թաղ., շ.43, բն.32: Մեկն. գինը՝ 10500000 դրամ:

-Բնակարան 35.1 ք.մ.: Հասցե՝ ք. Երեւան, Նոր-Նորք համ., 2-րդ մ/շ., շ.99, բն.3: Մեկն. գինը՝ 12100000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 06.08.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

Marriott
ARMENIA YEREVAN

ՀՈՒԼԻՍ Ծիրանի ամիս

Վայելեք հայտնի հայկական ծիրանը մեր բացօթյա սրճարանում:
Պատվիրեք Ծիրանի Բելլինի կամ ծիրանի համով սառը թեյ և համտեսեք մեր տնական պատրաստված աղանդերը:



JULY Month of Apricot

Enjoy the prestigious Armenian fruit in our outlets in a contemporary style. Order your Apricot Bellini or Apricot scented Ice-tea. Taste one of our homemade desserts.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**«Երեւանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը** սննդամթերք (պանրիկ, հավի կոտլետ եւ մսով լցոնած բլինչիկ) ձեռք բերելու համար «ԱԵՍՀԿ-ՍՊՋԲ-10/1» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ի «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ում ունեցած 163058150000 հաշվեհամարին կամ կանխիկ վճարել «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ին:

Գնանշման հարցման հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն, «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ին:

Դիմել՝ ք. Երեւան, Մարգարյան 35:

Գնման մրցութային հանձնաժողովի քարտուղար Մ. Հակոբյան (հեռ. 091 555932)

www.
azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 05.07.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: